

13-14(336-337)
4.05.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնապարտություն եւ գիրարար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԵՌԱՏՈՆԻ ՄԵՋ ԱԶԳԻ ԱՆՅՅԱՆ Է, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՂԱԿԱՆ

Մայիս ամիսը հայ ժողովրդի համար հաղթանակի խորհուրդ ունի, որ դարերի խորքից է գալիս: Ավարայր, Սարդարապատ, Շուշի... Սրանք սոսկ տեղանուններ չեն, որտեղ պարզապես տեղի են ունեցել պատմարժեք իրադարձություններ: Թե՛ Ավարայրում, թե՛ Սարդարապատում և թե՛ Շուշիում շողացել է Թուր-Կեմալի կորով և վատահոյություն ներարկելով գոյության անհավասար կռիվ մղող հայ ժողովրդին: Եվ թեպետ հերոսական այդ իրադարձությունները ժամանակային կտրվածքով շուրջ մեկուկես հազարամյակ են կազմում, այդուհանդերձ, անփոփոխ է մնացել պայքարի հրամայականը՝ գոյատևելու համար պիտի կարողանալ կռվել անձնուրացորեն:

Դժվար է, իհարկե, համադրել գիրն ու սուրը, քանզի եթե առաջինը իմաստունների զենքն է, ապա սուրը արյան ու ավերի խորհրդանիշն է: Բայց երբ այս երկուսը հանդես են գալիս միասին՝ սուրը դառնում է չարիքի դեմ պայքարի հուսալի միջոց: Հենց այս համատեղումն է հայ ազգին դարերում փրկել կործանումից: Սուրը խաչածակելով՝ դարձել է քրիստոնեական հավատի սուրբ նշան, զորությամբ լցվել ու հաղթանակի տարել հային:

Մայիսյան հաղթանակների մեջ առանձնակի նշանակություն ունի Մայիսի 9-ը: Իր մեջ ներառելով երեք տոն՝ Մեծ Հայրենականում տարած հաղթանակ, Շուշիի ազատագրում և ԼՂՀ պաշտպանության բանակի ստեղծում, այդ օրը խտացնում է հայ ժողովրդի պանծալի անցյալը, ներկան ու ապագան: Ժամանակային այս եռաչափ սահմանման մեջ նույնպես մեծ խորհուրդ կա, քանզի մենք եռանշանակության մեջ ենք տեսնում նաև Հայաստան-Արցախ-Սփյուռք կապի իրական արժեքը:

Նկատենք, Մայիսի 9-ի հաղթանակների մեջ երեք սերունդ է առկա. նրանք, ովքեր Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ոչ միայն հարազատ հայրենիքը, այլ նաև ամբողջ աշխարհն են փրկել ֆաշիզմի ստրկությունից, նրանք, ովքեր 1992-94 թվականներին մարտնչելով ազերական զավթիչ բանակի դեմ՝ ազատագրել են հայրենի Արցախը, և նրանք, ովքեր այսօր անառիկ են պահում ազատ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանները: Հայրենիքի պաշտպաններին սովորաբար ընդհանրական բառով ենք զնահատում՝ հերոսներ, և դա ասում ենք առանց զգայական շեշտումների, պարզապես ճիշտ և տեղին արձանագրելով իրողությունը: Երևի քիչ ժողովուրդներ կան աշխարհում, որոնց ներկայի մեջ միանգամից բովանդակված լինի հերոսների երեք սերունդ, և մենք նրանցից մեկն ենք:

Մեր ներկան՝ մեր հպարտությունն է, որ կրում ենք անենքս մեր մեջ՝ մեծ թե մանուկ: Դա նշանակում է, որ վաղվա հանդեպ դարձյալ վստահ ու լիահավատ ենք: Անվիճելի ճշմարտություն է՝ եթե պապերի ու հայրերի սխրանքը ճիշտ է յուրացվում, ապա գալիք հաղթանակները ևս երաշխավորված են:

Շնորհավոր բոլորիս եռատոնը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՊԱԳԱՅԻՆ ՈՒՂՂԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ



Այսպիսի համապարփակ խանդավառություն թերևս լինում է միայն ուսումնական տարեկազմին կամ դպրոցական վերջին զանգի ժամանակ: Բայց այս անգամ առիթը ոչ պակաս կարևոր էր. Ստեփանակերտի Ալ. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի հիմնանորոգ և վերակառուցված շենքի հանդիսավոր բացումն էր, ինչի կապակցությամբ դպրոց էին ժամանել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ռուսաստանաբնակ բարերար Սերգեյ Սարկիսովը, որի տրամադրած ֆինանսական միջոցներով՝ շուրջ 3 միլիոն դոլար, կատարվել են շենքի շինարարական աշխատանքները:

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզև Մարտիրոսյանը, ԼՂՀ պաշտոնատար անձինք, ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը և ուրիշներ: Հարազատ կրթօջախի վերափոխված տեսքին ծանոթանալու և մանկավարժական ու աշակերտական կոլեկտիվների ուրախությունը կիսելու էին եկել դպրոցի երախտավոր ուսուցիչներ, նախորդ տարիների շրջանավարտներ:

Մայրաքաղաքի հեղինակավոր ուսումնական հաստատություններից մեկը համարվող այս դպրոցը հայտնի է իր նշանավոր շրջանավարտներով՝ գիտնականներ, հասարակական ու քաղաքական գործիչներ: Այստեղ է սովորել նաև Հայաստանի Հանրապետության ազգային հերոս և Արցախի հերոս Յուրա Պողոսյանը, որի սխրանքների մասին քաջ գիտեն նաև ՀՀ սահմաններից դուրս:

Առանց այն էլ գեղեցիկ տեսք ստացած դպրոցական շենքը տոնակաճորեն էր զարդարված. գույնզգույն փուչիկների, եռագույն դրոշների, դրանց գունային համադրությամբ խորհրդանշաններ կրող երեխաների ուրախ դեմքերը և Արցախի օրհներգի հոգեպարար երաժշտությունը հուշում էին, որ դպրոցի կյանքում նոր էջ է բացվում:

Հանդիսավոր միջոցառմանը ելույթ ունեցողները երախտագիտության խոսքեր հղեցին Ս. Սարկիսովին՝ շեշտելով նրա հայրենասիրական ձեռնարկման կարևորությունը: Դպրոցի տնօրեն Լյուդմիլա Հովհաննիսյանը, հակիրճ ներկայացնելով 70-ամյա կրթօջախի՝ որպես մատաղ սերնդի կրթության և դաստիարակության դարբնոցի, պատմությունը, վստահեցրեց, որ այսուհետ առավել, երբ իշխանությունները դեմքով շրջվել են դեպի կրթությունը ու բարերարների հետ ձեռք ձեռքի, նման պայմաններ են ստեղծում, դպրոցն ավելի մեծ հաջողություններ կունենա:

Իշխանությունների անուսից բարերարին երախտագիտություն հայտնեց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը՝ երեխաներին նման նվեր մատուցելու համար, կրթօջախ, որն իր պայմաններ



րով չի զիջում զարգացած երկրների առաջավոր դպրոցներին, ու նաև այն բանի համար, որ հայրենիքում է ներդրումներ կատարում նա, քանզի միայն հայրենիքում ստեղծված արժեքներն են մնալու: Նախարարը նաև իր խորին երախտագիտությունը հայտնեց նյուս բարերար՝ Ս. Սարկիսովի եղբայր Ն. Սարկիսովին, ում միջոցներով հաջորդ տարի կունենանք մայրաքաղաքի հ. 1 դպրոցի նորակառույց շենքը: Ս. Ասրյանն իր խոսքում արտահայտեց հետևյալ գաղափարը. «Կրթության ոլորտը, որը հիմա, այսպես ասած, սպառողի կարգավիճակում է, մի քանի տարի անց կփոխհատուցի իր վրա կատարված ներդրումները՝ պատրաստած լավագույն մասնագետների շնորհիվ»:

Ինքը՝ բարերարը, անչափ շոյված լինելով նման ընդունելությունից, իր նախածեռությունը հենց այդպես էլ որակեց ոչ թե բարեգործություն, այլ ներդրում՝ ուղղված ապագային: Նրա խոսքը հիմնականում աշակերտներին էր ուղղված. «Այս դպրոցը ոչինչ չարժե, եթե դուք այստեղ զաք ժամանակ վատնելու: Ինչ մենք արել ենք, ինչ անում է երկրի ղեկավարությունը, այն նպատակով է, որ դուք ստանաք որակյալ կրթություն: Ամենից լավ ներդրումը գիտելիքներն են: Իսկ գիտելիքները, որ օգտագործում ենք կյանքում, հիմնականում ձեռք են բերվում դպրոցում»: Այս նկատառումով նա աշակերտներին կոչ արեց ստացած նվերը ոչ միայն խնամքով ու զգուշությամբ պահպանել, այլև արդյունավետ օգտագործել:

Խորհրդանշական կարմիր ժապավենը կտրելու պատիվը վերապահվեց բարերարին ու դպրոցի տնօրենին, որից հետո Հայ Առաքելական եկեղեցու արցախյան թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ձեռամբ կատարվեց օրհնության կարգ:

Տեղի ունեցավ դպրոցի բակում տեղադրված՝ ռուս մեծ գրող, հայ ժողովրդի բարեկամ Ալեքսանդր Գրիբոյեդովի կիսանդրու բացման արարողությունը: Այնուհետև հյուրերը դպրոցի փառքի անկյունում հարգանքի տուրք մատուցեցին Արցախյան գոյամարտում նահատակված՝ դպրոցի շրջանավարտների հիշատակին:

Հանդիսավոր միջոցառումն ավարտվելուց հետո ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը և բարերար Սերգեյ Սարկիսովի իրենց ուղեկցող պաշտոնատար անձանց և հյուրերի հետ շրջայց կատարեցին դպրոցում՝ ծանոթանալով հիմնանորոգ դասասենյակներին, որոնք համարված են անհրաժեշտ գույքով և ուսումնական պարագաներով: Հարմարավետ նոր դահլիճում դպրոցի շնորհալի սաները հանդես եկան երաժշտական կատարումներով և արտասանություններով: Նրանց հետ նաև՝ ուսուցիչները:

Բարերարը գոհ էր «Պանտ» ընկերության կողմից իրականացված շինարարական աշխատանքների որակից: Լրագրողների հետ ունեցած ճեպագրույցում արտահայտելով իր գոհունակությունը, նա մասնավորապես ասաց. «Երբ տեսնում ես աշխատանքիդ արդյունքը, ցանկանում ես ավելին անել»: Իսկ դա նաև պարտավորեցնող է, և այս շեշտմամբ էլ բարերարը խոստացավ առաջիկայում նոր ծրագրեր ձեռնարկել Արցախում:

Նույն օրը Նախագահը բարերարների հետ այցելել է Ստեփանակերտի մանկական ստեղծագործական կենտրոն, ծանոթացել աշխատանքային պայմաններին, դիտել հաստատության սաների պատրաստած տոնական ներկայացումը:

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԿԱՐԳ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2013 թվականի ապրիլի 25-ի N 90-Ն
հրամանի

ԿԱՐԳ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրակրթական Ռեսուրսային Հաստատության Սովորողների
Կողմից Կրթական Ծրագրերի Յուրաքանչյուր, Աստիճանային, Աստիճանային Կամ Աստիճանային
Անհանգստացման, Սովորողների Փոխանցման Եվ Ավարտման

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) սովորողի փոխադրման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման կազմակերպման, ինչպես նաև մեղալի հավակնորդ շրջանավարտին մեղալով պարզևատման և ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման գործընթացի կազմակերպման հետ կապված իրավահարաբերությունները՝ անկախ Հաստատության կազմակերպիչի կողմից և ենթակայությունից:

II. ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՂԱՍԱՐԱՆԻՑ ՂԱՍԱՐԱՆ ԲԱՆ ՓՈՒՍԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԱՎԱՐՏՈՒՄԸ

2. 1-ին դասարանում սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան՝ գիտելիքների անհրաժեշտ նվազագույնի յուրացման պայմանով՝ բնութագրման միջոցով:

Առանձին դեպքերում սովորողը կարող է կրկնել տվյալ ուսումնական տարվա դասընթացը՝

- 1) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումի և Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ,
2) դասվարի հիմնավորված առաջարկության հիման վրա՝ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ և ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր համաձայնությամբ:

3. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

4. 4-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 1-ին աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 4-10 միավոր գնահատված սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

5. 9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան՝ 4-10 միավոր և ավարտական քննություններից՝ 8-20 միավոր գնահատված սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական:

6. 12-րդ դասարանում (հանրակրթական հիմնական ծրագրերի 3-րդ աստիճանի ավարտական դասարան) ուսումնական բոլոր առարկաներից տարեկան՝ 4-10 և պետական ավարտական քննություններից՝ 8-20 միավոր, ինչպես նաև «Ֆիզկուլտուրա» և ռուսերենով ուսուցմամբ դասարաններում «Ռուս գրականություն» առարկաների պետական ավարտական քննություններից 4-10 միավոր գնահատված շրջանավարտը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:

7. Հաստատությունում որևէ առարկա չդասավանդվելու պատճառով տվյալ առարկայից գնահատական չունեցող սովորողն իր ցանկությամբ այդ առարկայից կարող է քննություն հանձնել էքստեռն կարգով: Այդ քննության արդյունքը հիմք է միջնակարգ կրթության ատեստատում տարեկան, իսկ քննական առարկայի դեպքում՝ քննական և տարեկան գնահատականներ նշանակելու համար:

8. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում մինչև երկու առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողի փոխադրման կամ ավարտման հարցը որոշ-

վում է օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում, նրա հանձնած վերաքննությունների արդյունքներով: Վերաքննությունների առաջադրանքները մշակվում են Հաստատության համապատասխան մեթոդիավորման կողմից:

9. 9-րդ դասարանի սովորողը, որի տարեկան՝ 1-3 և (կամ) ավարտական քննություններից՝ 1-7 միավորների ընդհանուր թիվը չի գերազանցում երկուսը, վերաքննությունները հանձնում է օգոստոսի 20-30-ը:

10. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ և 10-րդ դասարաններում վերաքննության արդյունքում մեկ կամ երկու առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

- 1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ
2) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի 1-3 միավոր գնահատված առնվազն մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև 2-րդ կիսամյակի ավարտը: Սույն կետում նշված վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը կրկնում է սույն կարգի 10-րդ կետում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

11. 11-րդ դասարանում վերաքննության արդյունքում մեկ կամ երկու առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝

- 1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ
2) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի երկու առարկաների վերաքննությունները:

Սույն կետով նշված վերաքննությունները չհանձնելու դեպքում սովորողը կրկնում է սույն կետում նշված պայմանով փոխադրված դասարանի դասընթացը՝ անկախ տվյալ դասարանում ստացած գնահատականներից:

12. 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների ուսումնական երեք և ավելի առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողները կրկնում են տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

13. 4-րդ դասարանի երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը:

14. 16 տարին չլրացած 9-րդ դասարանի և 19 տարին չլրացած 12-րդ դասարանի սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե՝

- 1) երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր է գնահատվել,
2) ավարտական քննությունների ընթացքում 1-7 և տարեկան 1-3 միավորների ընդհանուր թիվը կազմում է երեք և ավելի,
3) վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ ուսումնական առարկայից ստացել է 1-7 միավոր:

15. Սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետի, 11-րդ կետի 1-ին ենթակետի, 12-րդ, 13-րդ, և 14-րդ կետերի համաձայն՝ հանրակրթական ծրագիրը կրկնող սովորողի համար ուսուցում կազմակերպելու նպատակով Հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագիտական խումբ:

Հիմք ընդունելով մասնագիտական խմբի կարծիքը և առաջարկությունները սովորողի

փաստացի առարկայական գիտելիքների մասին՝ Հաստատության տնօրենը հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական ուսուցման ծրագրեր և լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց:

16. Սովորողին ամառային առաջադրանք տալու կամ դասընթացը կրկնելու վերաբերյալ Հաստատության մանկավարժական խորհրդի որոշման մասին, տնօրենի հանձնարարությամբ, սովորողի ծնողին (օրինական ներկայացուցչին) տեղյակ է պահում դասընթաց՝ մանկավարժական խորհրդի նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր ծանուցմամբ:

17. 16-19 տարեկան 9-րդ դասարանի սովորողը ծնողի (կամ օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կարող է թողնել Հաստատությունը, եթե՝

- 1) երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 միավոր է գնահատվել,
2) ավարտական քննությունների արդյունքում 1-7 և տարեկան 1-3 միավորների ընդհանուր թիվը կազմում է երեք և ավելի ուսումնական առարկաներից,

3) վերաքննությունների արդյունքում առնվազն մեկ առարկայից ստացել է 1-7 միավոր:

18. 19 տարին լրացած՝ երեք և ավելի ուսումնական առարկաներից տարեկան 1-3 և (կամ) քննական 1-7 միավոր գնահատված 9-րդ և 12-րդ դասարանների սովորողը դուրս է մնում Հաստատությունից:

19. Մինչև 19 տարեկան 12-րդ դասարանի սովորողը, տարեկան 1-3 և (կամ) ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու դեպքում (եթե ընդհանուր թիվը չի գերազանցում երկուսը), վերաքննություն է հանձնում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Օտար լեզու» «Մաթեմատիկա», «Բնագիտություն» և «Հայոց պատմություն» առարկաներից հուլիսի 2-8-ը և (կամ) օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ իր Հաստատությունում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԳԹԿ) քննական առաջադրանքներով, իսկ ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկաներից՝ իրենց Հաստատության մեթոդիավորումների կողմից մշակված քննական առաջադրանքներով՝ օգոստոսի 20-30-ը:

20. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի արական սեռի սովորողները քննաշրջանի ավարտից հետո տարեկան 1-3 և (կամ) քննական 1-7 միավոր գնահատված լինելու դեպքում դուրս են մնում Հաստատությունից: Այդ սովորողներն իրավունք ունեն քննություն (ներ) հանձնել և հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալ:

21. 19 տարին լրացած 9-րդ և 12-րդ դասարանի իգական սեռի, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության չգորակոչված քաղաքացիներին իրավունք է վերապահվում հաջորդ տարին նույն Հաստատությունում հանձնել քննություններ այդ առարկաներից, իսկ նոր բնակավայր տեղափոխվելու դեպքում՝ այդ բնակավայրում գտնվող Հաստատություններից մեկում:

22. 9-րդ և 12-րդ դասարանների քննական առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված սովորողների վերաքննությունների արդյունքները հիմք են հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում տարեկան և քննական գնահատականներ նշանակելու համար:

«Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն», «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և «Երկրաչափություն» առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են «Հայոց լեզու, գրականություն» «Հայոց լեզու, հայ գրականություն» և «Մաթեմատիկա» քննական առարկաների գնահատականների հիման վրա:

23. 12-րդ դասարանի սովորողի կողմից, բնագիտական կամ օտար լեզուների առարկայախմբից, որպես միասնական քննություն (այսուհետ՝ Միասնական քննություն) երկու առարկա ընտրելու դեպքում, միջնակարգ կրթության ատեստատում լրացվում է սովորողի կողմից նախընտրած առարկայի Միասնական քննության ավարտական մասի գնահատականը:

24. Բնագիտական կամ օտար լեզուների առարկայախմբի 2 առարկաներից վերաքննություններ հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում քննական գնահատականը լրացվում է սովորողի ընտրությամբ:

25. Սույն կարգի 17-րդ կետի, 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերի 1-ին ենթակետով և 23-րդ կետի պահանջներին համապատասխան՝ քննություն չհանձնած սովորողներին հետագայում իրավունք է վերապահվում ընդհանուր հիմունքներով հանձնել էքստեռն ավարտական քննություններ և ստանալ Հաստատության ավարտական փաստաթուղթ (վկայական կամ ատեստատ):

26. 2-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10 միավոր գնահատված սովորողը պարզևատմվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գովասանագրով:

27. 8-րդ և 9-րդ դասարանների ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից (բացի առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաներից ազատված լինելու դեպքերը) չգնահատված՝ հիմնական դպրոցի սովորողը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում:

28. 12-րդ դասարանում տարեկան 9-10 միավոր գնահատված սովորողը Հաստատության կողմից ներկայացվում է որպես գերազանցության մեղալի (այսուհետ՝ Մեղալ) հավակնորդ՝ պահպանելով սույն կարգի 47 և 48 կետերի պահանջները:

29. Ուսումնական առարկաներից տարեկան գնահատականներ նշանակվում են դասավանդող ուսուցիչներն ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում՝

ԿԱՐԳ

հաշվի առնելով սովորողի կիսամյակային գնահատականները:

30. «Ֆիզիկուլտուրա», «Նախնական գինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկաների պարասպորտային առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունն ավարտելու վրա:

III. ՌԻՍԿԻՆՎԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ 180-240 ԺԱՄ ԲԱՑԱԿԱՅԱՆՍՈՒՄՈՒԹՅԱՆ ՀԱՅՏՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՏՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈՒՆԴՐՈՒՄԸ

31. Ուսումնական տարվա ընթացքում, մինչև սույն կարգի 32-րդ կետով սահմանված ժամկետում 180-240 ժամ դասերից բացակայած 2-12-րդ դասարանների սովորողի՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է Հաստատության մանկավարժական խորհրդում, մինչև մայիսի 15-ը:

32. Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում և ամփոփվում է ուսումնական տարվա ավարտի 15 օր առաջ:

33. Հաստատության տնօրենը հաստատում է 5 քննական առարկաների ցանկը, ժամանակացույցը և տեղեկացում է Նախարարությանն ու լիազոր մարմնին: Քննություններին կարող են մասնակցել Նախարարության և (կամ) լիազոր մարմնի ներկայացուցիչ(ներ)-ը:

34. Հաստատության մանկավարժական խորհուրդը կազմում և տնօրենի հաստատման է ներկայացնում տեղեկանք՝ 2-12-րդ դասարանների սովորողի բացակայությունների քանակի, դրանց բնույթի վերաբերյալ:

1) 240 ժամից ավելի հարգելի պատճառով բացակայած սովորողներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) կողմից բացառության կարգով կարող է թույլատրվել հանձնել քննություններ 5 առարկաներից: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմների (Ստեփանակերտի քաղաքապետարանի) աշխատակազմերի կրթության բաժինների (այսուհետ՝ Կրթության բաժիններ) վարիչների պատճառաբանված ներկայացման հիման վրա:

2) Նախարարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում և տեղեկացնում է Հաստատության տնօրենին:

35. Բոլոր դասարանների քննական առաջադրանքները մշակվում են Հաստատության մեթոդիկական կոմիտեի՝ առնվազն 3 տարբերակով:

36. Քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա մշակվում են սովորողի տարեկան գնահատականները:

37. Որևէ կիսամյակում 180-240 ժամ բացակայության դեպքում սովորողի կիսամյակային գնահատականները չեն մշակվում՝ անկախ ընթացիկ գնահատականների առկայությունից:

1) Տվյալ կիսամյակի կիսամյակային և տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ մանկավարժական խորհրդի կողմից սահմանված ժամանակացույցի՝ սույն կարգի համաձայն:

2) Ուսումնական տարվա ընթացքում 180-240 ժամ բացակայության դեպքում բոլոր առարկաների տարեկան գնահատականները որոշվում են լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների միջոցով՝ մանկավարժական խորհրդի կողմից սահմանված ժամանակացույցի՝ սույն կարգի համաձայն:

38. 240 ժամից ավելի բացակայելու կամ սույն կարգի 33-րդ և 36-րդ կետերով նախատեսված քննություններից և ամփոփիչ ստուգողական աշխատանքներից (10 միավորային համակարգում) 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում սովորողը կրկնում է դասընթացը, իսկ 9-րդ և 12-րդ դասարանների՝ 19 տարին լրացած սովորողը դուրս է մնում ուսումնական հաստատությունից:

39. Հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների գիտելիքների ստուգումը, ավարտական և պետական ավարտական, այդ թվում՝ ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Մեդալի հավակնորդների քննությունների կազմակերպումն ու անցկացումն իրականացվում է սույն կարգի և Նախարարի՝ տվյալ ուսումնական տարվա համար հաստատած սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցի և աշխատակարգի համաձայն:

VI. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

40. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» և (կամ) «Երկրաչափություն» առարկաներից տարեկան 1-3 միավոր գնահատված լինելու դեպքում չեն մասնակցում «Մաթեմատիկայի» ավարտական, 12-րդ դասարանում՝ պետական ավարտական քննություններին:

41. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների համար «Մաթեմատիկա» առարկայի վերաբերյալ քննության արդյունքը հիմք է հանդիսանում հիմնական կրթության վկայականում՝ «Երկրաչափություն» և «Հանրահաշիվ» միջնակարգ կրթության ատեստատում: «Երկրաչափություն» ու «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաներից տարեկան, «Մաթեմատիկա» առարկայից քննական գնահատական մշակակելու համար:

42. 9-րդ և 12-րդ դասարանների սովորողները «Հայոց լեզու» կամ «Գրականություն» («Հայ գրականություն») առարկաներից կամ երկուսից միաժամանակ տարեկան 1-3 միավոր ունենալու դեպքում չեն մասնակցում 9-րդ դասարանում «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական, 12-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն սույն կարգի 19-րդ կետում նշված ժամանակահատվածներում: Վերաքննությունների արդյունքները հիմք են հանդիսանում հիմնական կրթության վկայականում «Հայոց լեզու», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու, գրականություն» առարկայից քննական և միջնակարգ կրթության ատեստատում «Հայոց լեզու», «Հայ գրականություն» առարկաներից տարեկան և «Հայոց լեզու, գրականություն» առարկայից քննական գնահատականներ մշակակելու համար:

43. Եթե 9-րդ կամ 12-րդ դասարանների սովորողը «Հայոց լեզու» առարկան ուսումնասիրել է վերջին երկու ուսումնական տարիներին, ապա հիմնական կրթության վկայականում այն միջնակարգ կրթության ատեստատում կայ առարկայի համապատասխան տողում սովորողի ցանկությամբ կարող են գրվել «չի ուսումնասիրել» բառերը: Սովորողն իր ցանկությամբ կարող է ազատվել 9-րդ դասարանում «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական և 12-րդ դասարանում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննություններից: Այդ դեպքում ավարտական փաստաթղթի համապատասխան տողում գրվում է՝ «ազատված է»:

Սույն կետում նշված գրառումների բացակայության դեպքում սովորողը մասնակցում է «Հայոց լեզու, գրականություն» առարկայի ավարտական և 12-րդ դասարանում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննություններին: Հաստատությունների պետական ավարտական քննությունները կազմակերպելու և վերահսկելու նպատակով Նախարարի հրամանով ստեղծվում է հանրապետական հանձնաժողով:

44. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողները ազատվում են գիտելիքների ստուգումից (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններից: Նրանց տրվում է պետական մոնիթինգ ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

45. Մեդալի ներկայացվում է 9-րդ դասարանը հիմնական կրթության գերազանցության վկայականով ավարտած և 10-12-րդ դասարաններում բոլոր առարկաներից տարեկան 9 կամ 10 միավոր գնահատված սովորողը:

46. Մեդալի ներկայացվում է 9-րդ դասարանը հիմնական կրթության գերազանցության վկայականով ավարտած և 10-12-րդ դասարաններում բոլոր առարկաներից տարեկան 9 կամ 10 միավոր գնահատված սովորողը:

47. Ուսումնական պլանով նախատեսված որևէ առարկայից չգնահատված սովորողը՝ որպես Մեդալի հավակնորդ, չի ներկայացվում բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) առողջության պատճառով «Տեխնոլոգիա», «Ֆիզիկուլտուրա», «Նախնական գինվորական պատրաստություն» և անվտանգ կենսագործունեություն» առարկաներից ազատված լինելը,

2) առանձին գործող ավագ դպրոցների բնագիտամաթեմատիկական և արհեստագործական հոսքերում ուսումնառության երեք տարիների ընթացքում «Հայոց եկեղեցու պատմություն», «Համաշխարհային պատմություն» առարկաների՝ ուսումնական պլանով չնախատեսված լինելը,

3) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը,

4) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը:

48. Մեդալի հավակնորդ սովորողների նախնական ցուցակները մինչև տվյալ ուսումնական տարվա մարտի 21-ը Հաստատությունները ներկայացնում են Կրթության բաժիններ, իսկ Նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների նախնական ցուցակները՝ Նախարարություն:

V. ՌԻՍԿԻՆՎԱԿԱՆ ՄԵՋ ԳԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

49. Մինչև մայիսի 10-ը Կրթության բաժինները և Նախարարությունը Հաստատություններում ստուգում են ներկայացված փաստաթղթերի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

50. Նախարարությունը մինչև մայիսի 25-ը Կրթության բաժիններ է ներկայացնում Մեդալի հավակնորդների վերջնական ցուցակները:

51. Մեդալի հավակնորդ բոլոր սովորողները (անկախ ուսումնական հաստատության ենթակայությունից և հաստատությունում ուսուցման լեզվից), այդ թվում՝ սույն կարգի 47-րդ կետի 1-4 ենթակետերի հիմքով քննություններին մասնակցող սովորողները, «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաների պետական ավարտական քննությունները հանձնում են կենտրոնացված կարգով.

1) Մեդալի հավակնորդ այն սովորողները, որոնց համար «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաները համարվում են բուհական ընդունելության մրցութային քննություն, քննություն են հանձնում միասնական համակարգով (պետական ավարտական քննության միավորները հաշվարկվում են միասնական քննության ավարտական մասի գնահատականի հիման վրա):

52. «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաները ոչ մրցութային լինելու դեպքում Մեդալի հավակնորդի հավակնորդի համար պահպանվում է կենտրոնացված համակարգով՝ հանձնված պետական քննական առարկայի գնահատականը:

53. Կենտրոնացված համակարգով հանձնվող «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից պետական ավարտական քննություններն անցկացվում են Նախարարության կողմից նախապես որոշված՝ Ստեփանակերտ քաղաքի որևէ Հաստատությունում՝ տվյալ քննությունների համար սահմանված օրերին:

54. «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների քննական աշխատանքները ստուգվում են Նախարարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից քննության հաջորդ օրը՝ ժամը 11:00-ից՝ ԳԹԿ համակարգային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Նախարարության ներկայացուցիչն է: Հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ: Քննական գրավոր աշխատանքները մինչև դրանց ստուգման ավարտը պահվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ:

55. Մեդալի հավակնորդ սովորողի, ինչպես նաև Հաստատության մյուս սովորողների համար քննական առաջադրանքները բովանդակությամբ ու կառուցվածքով նույնն են:

56. Մինչև հունիսի 25-ը Հաստատությունը Կրթության բաժին է ներկայացնում տեղեկանք՝ Հաստատությունում մյուս չորս առարկաներից մեդալի հավակնորդ շրջանավարտի հանձնած պետական քննությունների արդյունքների մասին: Ստացված արդյունքները ընդհանրացվում են Կրթության բաժիններում և մինչև հունիսի 28-ը ներկայացվում են Նախարարության: Նախարարության ենթակայության Հաստատությունները սույն կետով նախատեսված տեղեկանքը նույն ժամկետում ներկայացնում են Նախարարություն:

57. Ավարտական քննություններից 20 միավորային համակարգում՝ 18, 19, 20 կամ 10 միավորային համակարգում՝ 9, 10 միավոր ստացած Մեդալի հավակնորդները պարգևատրվում են Մեդալով:

58. Մեդալի հավակնորդ սովորողների համար քննական առաջադրանքները բովանդակությամբ ու կառուցվածքով նույնն են:

59. Մինչև հունիսի 25-ը Հաստատությունը Կրթության բաժին է ներկայացնում տեղեկանք՝ Հաստատությունում մյուս չորս առարկաներից մեդալի հավակնորդ շրջանավարտի հանձնած պետական քննությունների արդյունքների մասին: Ստացված արդյունքները ընդհանրացվում են Կրթության բաժիններում և մինչև հունիսի 28-ը ներկայացվում են Նախարարության: Նախարարության ենթակայության Հաստատությունները սույն կետով նախատեսված տեղեկանքը նույն ժամկետում ներկայացնում են Նախարարություն:

VI. ՄԵԴԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՊԻՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

60. Մեդալի հավակնորդ բոլոր սովորողները (անկախ ուսումնական հաստատության ենթակայությունից և հաստատությունում ուսուցման լեզվից), այդ թվում՝ սույն կարգի 47-րդ կետի 1-4 ենթակետերի հիմքով քննություններին մասնակցող սովորողները, «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաների պետական ավարտական քննությունները հանձնում են կենտրոնացված կարգով.

1) Մեդալի հավակնորդ այն սովորողները, որոնց համար «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաները համարվում են բուհական ընդունելության մրցութային քննություն, քննություն են հանձնում միասնական համակարգով (պետական ավարտական քննության միավորները հաշվարկվում են միասնական քննության ավարտական մասի գնահատականի հիման վրա):

52. «Հայոց լեզու և հայ գրականություն» և (կամ) «Մաթեմատիկա» առարկաները ոչ մրցութային լինելու դեպքում Մեդալի հավակնորդի համար պահպանվում է կենտրոնացված համակարգով՝ հանձնված պետական քննական առարկայի գնահատականը:

ԿԱՐԳ

Հավելված՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2013 թվականի մայիսի 2-ի N 100/Մ
հրամանի

ԱՃԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՏՈՒՎՄԱՆ, ԱԿԱՐՏԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՉԿԱՅՄԱՆ

1. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում՝ անկախ դրանց կազմակերպչական ձևից, ենթակայությունից և ուսուցման լեզվից (այսուհետ՝ Հաստատություն), 2012-2013 ուստարվա ուսումնական պարամունքներն ավարտվում են 2013 թվականի մայիսի 24-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ 1-ին դասարանների, առնվազն 32 ուսումնական շաբաթ՝ 2-րդ դասարանների և առնվազն 34 ուսումնական շաբաթ՝ 3-12-րդ դասարանների համար:

2. Հունիսի 1-22-ը Հաստատությունների 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացվում են համապատասխանաբար՝ գիտելիքների ստուգում, ավարտական և պետական ավարտական քննություններ: Քննությունները սկսվում են առավոտյան ժամը 11.00-ին: Սովորողները Հաստատություն են ներկայանում ժամը 10.00-ին:

3. Մինչև մայիսի 22-ը Հաստատության տնօրենությունը ուսուցիչներին, համապատասխան դասարանների սովորողներին և նրանց ծնողներին ծանոթացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2013 թվականի ապրիլի 25-ի N 90-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման» կարգին և սույն աշխատակարգին:

4. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդ սովորողները թույլատրվում են քննության՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացված վերջնական ցուցակի:

5. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են կոնսուլտացիաներ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:

6. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է.

«Մայրենի» առարկայից՝ հունիսի 3-ին (թեստ) և «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 5-ին (գրավոր):

Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ «Ռուսաց լեզու» առարկայից (թեստ)՝ հունիսի 7-10-ն ընկած ժամանակահատվածում:

1) Գիտելիքների ստուգման առաջադրանքները կազմում են Հաստատության մեթոդափնջումները՝ ըստ Նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կողմից մշակված նմուշների (առնվազն 3 տարբերակ): Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից:

2) Հաստատության տնօրենը հաստատում է առաջադրանքները, կնքում և ծրարում: Ծրարներից մեկը բացվում է գիտելիքների ստուգման օրը քննասենյակում՝ սովորողների ներկայությամբ:

3) Գրավոր աշխատանքի կատարման համար տրվում է 90 րոպե, գնահատումը՝ 10 միավորային համակարգով:

4) Գիտելիքների ստուգումն իրականաց-

նում են դասավանդող ուսուցիչները և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:

5) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

7. 9-րդ դասարանի ավարտական քննություններն անցկացվում են.

1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ հունիսի 5-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:

2) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Վշխարհագրություն») առարկայից՝ աշակերտի ընտրությամբ, հունիսի 8-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:

3) «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 12-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:

4) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ) առարկայից՝ աշակերտի ընտրությամբ՝ հունիսի 15-ին (գրավոր), քննությանը տրվում է 90 րոպե:

5) «Հայոց պատմություն» առարկայից՝ հունիսի 19-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:

6) «Ռուսաց լեզու» առարկայից՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ հունիսի 22-ին (գրավոր), քննությանը տրվում է 90 րոպե:

8. 12-րդ դասարանում պետական ավարտական քննություններն անցկացվում են .

1) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ հունիսի 3-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:

2) «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Վշխարհագրություն») առարկայից՝ աշակերտի ընտրությամբ հունիսի 6-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:

3) «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 10-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:

4) «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ) առարկայից՝ հունիսի 13-ին (գրավոր), քննությանը տրվում է 90 րոպե:

5) «Հայոց պատմություն» առարկայից հունիսի 17-ին (գրավոր), քննությանը տրվում է 120 րոպե:

6) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար սահմանվում է քննություն «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր): Քննությունն անցկացվում է քննաշրջանի ընթացքում, քննության անցկացման օրը որոշում է մանկավարժական խորհուրդը: Քննական հանձնաժողովը ստեղծվում է Հաստատության տնօրենի հրամանով՝ առարկայական մեթոդական միավորումների անդամներից:

9. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար լրացուցիչ տրվում է 30-ից 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:

10. 9-րդ և 12-րդ դասարաններում քննություններն անցկացվում են ԳԹԿ-ի կազմած թեստերով, գնահատումը՝ 20 միավորային համակարգով:

11. Քննության սկիզբը հայտարարվելուց հետո ուշացած սովորողների մուտքը քննասենյակ արգելվում է:

12. Սովորողը քննություններին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով կամ ծննդյան վկայականով:

13. Հանրակրթական Հաստատությունների մտավոր հետամնացություն ունեցող սովորողների գիտելիքների ստուգումը և ամփոփումը կատարվում է՝ համաձայն անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ):

14. «Ֆիզկուլտուրա» առարկայի քննությունները կազմակերպվում են հանրակրթական մյուս առարկաների քննություններն սկսելուց առնվազն 5 օր առաջ: «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական և պետական ավարտական քննություններն ընդունվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետևյալ կազմով. հանձնաժողովի նախագահ, դասավանդող ուսուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ:

Քննություններն անցկացվում են՝ համաձայն Նախարարության կողմից հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 9-րդ և 12-րդ ավարտական դասարանների «Ֆիզկուլտուրա» առարկայի քննությունների նորմատիվային պահանջների, գնահատումը՝ 10 միավորային համակարգով:

Երեկոյան և հատուկ հանրակրթական դպրոցներում (բացառությամբ՝ օժանդակ դպրոցների) նույնպես գործում է սույն աշխատակարգը՝ պահպանելով ավարտական դասարանների համապատասխանությունը:

15. Քննական գրավոր աշխատանքները մինչև դրանց ստուգման ավարտը պահպանվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում:

16. Քննությունից բացակայած կամ ուշացած Մեդալի հավակնորդ սովորողը զրկվում է Մեդալ ստանալու իրավունքից:

17. Մեդալի հավակնորդները քննություններին ներկայանում են անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով, ծննդյան վկայականով կամ Հաստատության տնօրենի կողմից տրված տեղեկանքով (լուսանկարի առկայությամբ):

18. Ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպվում են ավարտական քննական կենտրոնում:

19. 9-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների ավարտական քննությունները կազմակերպվում են կենտրոնացված կարգով՝ Նախարարի հրամանով հաստատված քննական կենտրոններում:

20. Քննական կենտրոն է դառնում յուրաքանչյուր Հաստատություն: Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե տվյալ ավարտական քննական կենտրոնի ղեկավարն է:

21. Քննական կենտրոնում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը կարող է նշանակել օգնական, հերթապահներ:

22. Քննական կենտրոնի ղեկավարը մինչև քննության օրը ԳԹԿ ներկայացուցիչ կամ ԳԹԿ համացանցային կայքի միջոցով ստանում է տվյալ քննական կենտրոնում քննության կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներ (բացի թեստերից):

23. Քննասենյակներում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը նշանակում է քննության ընթացքի կազմակերպիչներ, ովքեր չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

24. Մինչև 30 սովորող ունեցող քննասենյակում աշխատանքները համակարգում են 2 կազմակերպիչ: 30-ից ավելի սովորող ունեցող

քննասենյակում առաջին 30 սովորողների համար՝ 2 կազմակերպիչ, մեկական կազմակերպիչ՝ յուրաքանչյուր հաջորդ 30-ի համար, ևս մեկ կազմակերպիչ՝ վերջին 20 և ավելի սովորողների համար:

25. Քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

26. Քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննությունը սկսվելուց մեկ ժամ առաջ կատարում է կազմակերպիչների գրանցում և վիճակահանությամբ բաշխում կազմակերպիչներին՝ ըստ քննասենյակների:

27. Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

28. Սովորողը մուտքնում է վիճակահանության սեղանին և վիճակահանության թերթիկի միջոցով որոշում իր նստարանի համարը: Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է սովորողի ազգանունը, անունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, վիճակահանված նստարանի համարը: Սովորողը ցուցակում ստորագրում է իր տվյալների տողում՝ «Նստարանի համարը» սյունակում:

29. Քննասենյակում կայացած վիճակահանության արդյունքի համապատասխան՝ երկրորդ կազմակերպիչն օգնում է սովորողին՝ գտնելու իր տեղը, և չի թույլատրում տեղափոխություններ կատարել:

30. Քննությունը սկսվելուց առնվազն երկու ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցիչի ստանում է քննական թեստերի փաթեթները:

31. Քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի պատասխանատուին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի թեստերից:

32. Ավարտական քննություններին սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց-ծեռնարկներ:

33. Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում:

34. Սովորողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննասենյակ է բերում քննական թեստերի ծրարները: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարները ցուցադրում է սովորողներին և ներկա այլ անձանց (ծնողներ, հավատարմագրված դիտորդներ)՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա: Ծրար(ներ)-ը բացելու համար պատասխանատուն հրավիրում է առաջին նստարան(ներ)-ին նստած սովորողներից մեկին: Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում հրավիրվում է սովորող այլ շարքից: Ծրարների բացման մասին նշվում է արձանագրության մեջ:

35. Քննասենյակի պատասխանատուն (կազմակերպիչը) սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաև բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգը ընթերցվելուց և սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են թեստերը: Սովորողը թեստն ստանալուց պես թեստի շապիկի համապատասխան մասում գրում է քննասեն-

ՓՈՒՆԱԴՐԱԿԱՆ

յակի և իր նստարանի համարը: Թեստերի վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում է քննության սկզբը և ավարտը:

36. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում՝ քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ և միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:

37. Խմբի կազմակերպիչը ավելորդ (չօգտագործված, խտտանված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո փաթեթավորում և հանձնում է քննասենյակի պատասխանատու կազմակերպչին:

38. Թեստի բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը չեն քննարկվում:

39. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերը փոխարինվում են նորով:

40. Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի կենտրոնի ղեկավարից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել Նախարարության, շրջվարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի և ԳԹԿ-ի ներկայացուցիչները:

41. Քննության ավարտից 30 րոպե առաջ քննասենյակի պատասխանատուն սովորողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները համապատասխան ձևաթղթերի վրա անցկացնելու մասին:

42. Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախազգուշացված սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից:

43. Հեռացվող սովորողից վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձևաթղթի էջի վրա գրվում է՝ «Հեռացված է քննությունից»: Քննասենյակի և խմբի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը:

44. Քննության օրը չներկայացած սովորողը քննություն է հանձնում:

1) Հիմնական դպրոցի (մինչև 19 տարեկան) սովորողը՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում:

2) Միջնակարգ դպրոցի (մինչև 19 տարեկան) սովորողը՝ հուլիսի 2-8-ը և (կամ) օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում:

45. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր թեստը և ստորագրում իր անվան դիմաց: Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա նա կարող է այն հանձնել և, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից: Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը:

46. Պատասխանատուն թեստերը քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված թեստերը վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որևէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (թեստերի քանակ):

47. Քննության ավարտից հետո սովորողների ցուցակները պահվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ՝ մեկ տարի:

48. Քննական աշխատանքները ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից քննության հաջորդ օրը՝ ժամը 12,00-ին, ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված թեստերի ճիշտ պատասխանների հիման վրա:

Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է:

49. 9-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամների 50%-ը տվյալ առարկայի մասնագետներ են:

50. 12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

51. Քննական արդյունքները գնահատելիս, քննական հանձնաժողովի անդամների միջև տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

Հավասար ձայների դեպքում վճռորոշ է՝

1) 4-րդ դասարանում՝ դասավանդող ուսուցչի առաջարկած գնահատականը,

2) 12-րդ դասարանի ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ «Ռուս գրականություն» առարկայի քննական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը:

3) Նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամ(ներ)-ը արձանագրության մեջ կարող է (են) կատարել հատուկ նշում:

52. Գրավոր աշխատանքները գնահատելիս սևագրությունը չի գնահատվում:

53. Քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 18,00-ից ոչ ուշ: Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ:

54. Քննական կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ դասարանների, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

55. Արդյունքների հրապարակումից հետո քննական կենտրոնի ղեկավարը էլեկտրոնային տվյալները, ինչպես նաև սույն կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված թեստերի բովանդակությանը վերաբերող սովորողի կամ նրա ծնողի (օրինական ներկայացուցչի) կողմից ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ արձանագրությունները համապատասխան լիազոր մարմնի իրազեկման բաժնի միջոցով ուղարկում է ԳԹԿ:

56. Բողոքը կարող է լինել՝

1) Քննության անցկացման կարգի խախտման մասին,

2) Քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին,

3) Թեստերի բովանդակության մասին:

57. Սույն կարգի 56-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոքարկել քննության պահին կամ ավարտից հետո՝ մինչև քննասենյակից դուրս գալը՝ բողոքը ներկայացնելով քննասենյակի պատասխանատուին, ով փոխանցում է այն կենտրոնի ղեկավարին: Կենտրոնի ղեկավարը մեկ ժամվա ընթացքում քննարկում և պատասխանում է բողոքը ներկայացնողին:

58. Սույն կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են ստուգող հանձնաժողովի նախագահին՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

Բողոքի քննարկման արդյունքները ոչ ուշ, քան դիմումն ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում են դիմողին:

59. Դիմումի քննարկումից հետո կարող է որոշում ընդունվել քննության գնահատականի պահպանման կամ բարձրացման, ինչպես նաև իջեցման մասին, որը հրապարակվում է և ուղարկվում ԳԹԿ:

60. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասության կարգով՝ Նախարարություն և (կամ) դատարան:

ՄԱՅՐԵՆԻ

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԱՈՒՉԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Թեստը պարունակում է որևէ տեքստ՝ գեղարվեստական կամ գիտահանրամատչելի, որի հիման վրա ձևավորված են թեստի բոլոր առաջադրանքները՝ թե՛ տեքստի բովանդակությանը վերաբերող, թե՛ ուղղագրական, քերականական կամ կետադրական:

Տեքստերի ծավալները կախված են դրանց տեսակից. գեղարվեստական բովանդակությամբ տեքստերը պարունակում են շուրջ 350 բառ, գիտահանրամատչելիները՝ ավելի պակաս՝ շուրջ 280 բառ:

Թեստը բաղկացած է 15 առաջադրանքներից, որոնցից 3-ը ենթաառաջադրանքներով են:

Յուրաքանչյուր ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

Ստուգվում են՝

1. Գիտելիքները ուղղագրությունից.

Տեքստի բառերից 4-ում տառեր են բաց թողած: Դրանց տեղում դատարկ վանդակ է: Աշակերտը պետք է արտագրի բառերը տրված տողերի վրա՝ լրացնելով բաց թողած տառերը: Յուրաքանչյուր ճիշտ գրված բառի համար տրվում է 1 միավոր (ընդամենը՝ 4 միավոր):

2. Գիտելիքները բառազփոխությունից.

- Ստուգվում են՝ ա. բառի՝ ուղղակի կամ փոխաբերական իմաստով գործածված լինելը տեքստում կամ բառակապակցության՝ դարձվածք կամ ոչ դարձվածք լինելը, բ. տեքստում գործածված բառի իմաստը, հոմանիշությունը, հակահիշությունը տեքստի այլ բառերի հետ:

- Տրվում են տեքստում հանդիպող 4 բառեր և դրանցից յուրաքանչյուրի դիմաց ճիշտ կամ սխալ գրվում է, թե ինչպիսի բառ է ըստ կազմության՝ պարզ, բարդ, ածանցավոր: Աշակերտը պիտի ընտրի ճիշտ կամ սխալ տարբերակը՝ պահանջին համապատասխան:

3. Գիտելիքները քերականությունից.

- Տեքստից դուրս են բերված բառեր, որոնց դիմաց ճիշտ կամ սխալ գրված է տվյալ բառի խոսքիմասային պատկանելությունը՝ գոյական, ածական, թվական, շաղկապ: Պետք է գտնել ճիշտ կամ սխալ տարբերակը՝ պահանջին համապատասխան:

- Տեքստից դուրս են բերված գոյականներ: Աշակերտը պետք է որոշի դրանց՝ հատուկ, թե հասարակ կամ տեքստում եզակի, թե հոգնակի թվով գործածված լինելը:

- Տեքստում բայերից 4-ը տրված են փակագծերում՝ ուղիղ ձևով՝ անորոշ դերբայով: Աշակերտը, ելնելով տեքստի բովանդակությունից, պետք է ընտրի այն տարբերակը, որում համապատասխան անորոշ դերբայի դիմաց ճիշտ կամ սխալ է տրված այն բառակազմը՝ ժամանակածը, դեմքը, թիվը, որով բայը պիտի հանդես գա տեքստում:

4. Գիտելիքները շարահյուսությունից.

- Տրվում է նախադասություն. աշակերտը պետք է գտնի այդ նախադասության ենթական կամ ստորոգյալը՝ պահանջին համապատասխան:

- Աշակերտը պետք է տեքստից դուրս գրի համապատասխան երանգի՝ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական, կամ համապատասխան կազմության՝ պարզ, բարդ, համառոտ, ընդարձակ, որևէ նախադասություն՝ պահանջին համապատասխան:

5. Գիտելիքները կետադրությունից.

Աշակերտը պետք է արտագրի տեքստի ընդգծված նախադասությունը և դնի բաց թողած կետադրական նշանը՝ բարդ նախադասության բաղադրիչների կամ բազմակի անդամների համար կամ նշանները՝ կոչականի համար:

Կետադրության վերաբերյալ առաջադրանքի ճիշտ կետադրման համար տրվում է 1 միավոր: Եթե տվյալ կետադրական կանոնը պահանջում է 2 կետադրական նշան (օրինակ՝ կոչականը՝ շեշտ և ստորակետ), ապա 1 միավոր է տրվում այն դեպքում, եթե 2 նշանն էլ ճիշտ են դրված: Ցանկացած այլ (ավելորդ կամ սխալ) կետադրական նշանի գործածության դեպքում այս առաջադրանքին միավոր չի տրվում, եթե անգամ ճիշտ նշանակված է պահանջվող կետադրությունը:

Որոշ կետադրական նշաններ (օրինակ՝ ուղղակի խոսքի անջատման գիծը, հարցական նշանը) դրված են այն պատճառով, որ աշակերտը դեռևս ծանոթ չէ կետադրական տվյալ կանոններին, իսկ առանց դրանց նախադասությունը կարող է անհասկանալի լինել: Այդ նշանների բաց թողնումը աշակերտի կողմից պետք է համարել անուշադրության սխալ: Այդպիսի սխալների համար միավոր չի հանվում:

6. Տեքստի ընկալման կարողությունները.

Տրվում է 7 հարց՝ տեքստի բովանդակության վերաբերյալ, որոնցից 2-ը ընտրովի պատասխանով են՝ պատասխանի 4-ական տարբերակներով, 5-ը՝ ընդարձակ, որոնց աշակերտը պետք է պատասխանի ինքնուրույն (1-ական նախադասությամբ): Տեքստի վերաբերյալ տրվող հարցեր պարունակող ընդարձակ պատասխանով առաջադրանքներից (ենթաառաջադրանքներից) յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1-ական միավոր, եթե հարցի պատասխանը ըստ տեքստի ճիշտ է: Քերականական և ուղղագրական սխալները հաշվի չեն առնվում: Որոշ առաջադրանքներ կատարելու համար անհրաժեշտ է նշել 2 բան՝ պահանջին համապատասխան: Այս առաջադրանքի համար տրվում է 1 միավոր, եթե երկու նշումն էլ ճիշտ են: Թեստի առավելագույն միավորն է 20-ը:

ՄԱՊԻՇ	ՊԱՅՄԱՆԸ
1	1
2-3	2
4-5	3
6-7	4
8-10	5
11-13	6
14-15	7
16-17	8
18-19	9
20	10

ՓՈՒՆԱԴՐԱԿԱՆ

ՄԱՅՐԵՆԻ
4-րդ դասարան
ԹԵՍՏ
(նմուշ)

Դավիթի կյանքը գրեթե հրաշալի էր. նա իրենց բակում շատ ընկերներ ուներ, որոնց հետ ամեն օր՝ դասերից հետո, գնում էր գնդակ խաղալու: Միայն թե Դավիթը մի մեծ խնդիր ուներ. դա նրա փոքր քույրն էր՝ Լիլին: Լիլին ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, որ Դավիթին ու նրա ընկերներին բոլորովին դուր չի գալիս, որ ինքը միշտ նրանց հետ (լինել): Յուրաքանչյուրը դուրս էին գալիս բակ, Լիլին իր փոքրիկ ոտիկներով վազում էր նրանց մոտ և ուրախ-ուրախ ցատկոտելով՝ հայտնում.

- Ես եկա՛...:

Բոլորը հոգոց էին հանում: Իրականում աղջիկը առանձնապես նեղություն չէր տալիս նրանց. շատախոս չէր, չէր նվճվում, չէր խառնվում նրանց խաղերին: Ծիծաղում ասած, շատ բան չէր էլ կարող անել: Այնքան փոքրիկ էր, որ ոչ կարող էր գնդակ խաղալ, ոչ ծառերը մազլցել, միայն իր սև աչիկներով լուրջ նայում էր տղաներին, և ուր նրանք գնում էին, ինքն էլ նրանց հետևից գնում էր:

Դավիթը փորձում էր մորը համոզել, որ Լիլին չթողնի իրենց հետևից գալ:

- Ինչո՞ւ պիտի իմ քույրը միշտ մեզ հետ լինի, - հարցնում էր նա, - ինչո՞ւ Արմենի քույրը չի գալիս, Յակոբի քույրը չի գալիս:

Մայրը ծիծաղում էր.

- Արմենի քույրը ընդամենը վեց ամսական է, Յակոբը ընդհանրապես քույր չունի... Քո բա՞տն այդ հարցում չի բերել:

Մի օր Դավիթը ուզում էր տղաների հետ գնդակ խաղալ: Սկզբում նրանք մի ծանր գնդակ ունեին: Բայց մի անգամ այդ գնդակը Սարգիս քեռու պատուհանը կոտրեց: Ի՞նչ պատմության մեջ ընկան: Գնդակն էլ այլևս հետ (չստանալ): Յիմա արդեն թեթև գնդակով էին խաղում: Այդ օրը տղաները դեռ նոր էին դուրս եկել, երբ Լիլին սովորականի պես վազեց նրանց մոտ ու ասաց.

- Ես եկա՛...:

Տղաները, ինչպես միշտ, ձևացրին, թե նրան չեն նկատում: Նրանք սկսեցին խաղալ: Տղաներից մեկը այնպես ուժգին հարվածեց գնդակին, որ այն այս անգամ էլ (ընկնել) Սարգիս քեռու բակը:

Նրանք վազելով մոտեցան ցանկապատին և տեսան գնդակը խոտերի մեջ՝ այնքան հեռու, որ ձեռք չէր հասնի: Յակոբը փորձեց անցնել ցանկապատի ճաղերի արանքով, բայց չկարողացավ:

- Ես չեմ կարող անցնել, - հուսահատ ասաց նա, - ցանկապատը շատ խիտ է: Եվ մեզանից ոչ մեկը չի կարող:

Իրավիճակն անելանելի էր: Բոլորից շատ Դավիթն էր տխրել:

- Այս ամենը Լիլիի պատճառով եղավ, - ասաց նա, - Տիգրանը այդքան ուժեղ խփեց գնդակին, որովհետև Լիլիի վրա էր բարկացել:

- Մի նայե՛ք Լիլիին, տեսե՛ք, թե նա ինչ փոքրիկ է, - ասաց Արմենը, - Լիլի՛, այստեղ արի: Լիլին վազելով եկավ՝ ասելով.

- Ես եկա՛...:

Յեշտությամբ մտնելով ճաղերի արանքից՝ Լիլին դուրս բերեց գնդակը ու հանձնեց հիացած տղաներին: Դավիթը հպարտությամբ նայում էր նրան, հետո ասաց.

- Ես քեզ գնդակ խաղալ (սովորեցնել):

1. Տեքստի բառերից 4-ում բաց թողած տառի փոխարեն դատարկ վանդակ է դրված: Դուրս գրիր այդ բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը:

Պատասխան՝ _____, _____, _____, _____

2. Ի՞նչ է նշանակում մազլցել բառը:

- 1) արագ վազել
- 2) ծառեր տնկել
- 3) ճյուղերը կոտրել
- 4) բռնելով բարձրանալ

3. Ո՞ր բառի հոմանիշը (իմաստով մոտ բառը) տեքստում չկա:

- 1) հիանալի
- 2) գայրահավ
- 3) թռչկոտել
- 4) դժգոհ

4. Տրված բառերից որի՞նք դիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության:

- 1) պատմություն – ածանցավոր
- 2) շատախոս – բարդ
- 3) սովորական – ածանցավոր
- 4) փոքրիկ – պարզ

5. Տեքստում հանդիպող հետևյալ բառերից ո՞րն է գործածված եզակի թվով:

- 1) խոտ
- 2) գնդակ
- 3) ծառ
- 4) ճաղ

6. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված:

- 1) *իրավիճակ* - ածական
- 2) *պատուհան* - գոյական
- 3) *որովհետև* - շաղկապ
- 4) *վեց* - թվական

7. Փակագծերում դրված բայերը տարբերակներում ներկայացված են որոշակի դեմքով, թվով և ժամանակով: Ըստ տեքստի՝ ո՞ր տարբերակի բայի ձևն է սխալ:

- 1) *լինել* - է լինում
- 2) *չստանալ* - չենք ստացել
- 3) *ընկնել* - ընկավ
- 4) *սովորեցնել* - կսովորեցնեն

8. Ո՞րն է տրված նախադասության ենթական:

Բայց մի անգամ այդ գնդակը Սարգիս քեռու պատուհանը կոտրեց:

- 1) գնդակը
- 2) Սարգիս
- 3) քեռու
- 4) պատուհանը

9. Տեքստից դուրս գրիր մեկ հարցական նախադասություն:

Պատասխան՝ _____

10. Տեքստում ընդգծված նախադասության մեջ բաց է թողնված մեկ կետադրական նշան:

Դուրս գրիր այդ նախադասությունը և դի՛ր բաց թողած կետադրական նշանը:

Պատասխան՝ _____

11. Նշիր երկու բան, որոնցով նկարագրվում է Լիլին:

Պատասխան՝ _____, _____

12. Ո՞րն էր Դավիթի հիմնական խնդիրը:

- 1) Յարևանը գնդակը հետ չէր տալիս:
- 2) Քույրն ամեն տեղ ուզում էր նրա հետ գնալ:
- 3) Ընկերը կորցրել էր Դավիթի միակ գնդակը:
- 4) Մայրը բարկանում էր, երբ ինքը քրոջ հետ կոպիտ էր վարվում:

13. Ուշադիր կարդա տեքստի երկխոսությունները և պատասխանիր տրված հարցերին:

ա. Ի՞նչ է պատասխանում մայրը տղայի հարցին:

- 1) Նրա ընկերներից ոչ մեկը քույր չունի:
- 2) Ընկերների մայրերը աղջիկներին թույլ չեն տալիս բակ դուրս գալ:
- 3) Նրանցից մեկը քույր չունի, իսկ մյուսինը դեռ շատ փոքրիկ է:
- 4) Լիլին իրենց բոլորովին չի խանգարում, չի նվճվում և խաղերին չի խառնվում:

բ. Ըստ Դավիթի՝ ինչո՞վ էր մեղավոր Լիլին, որ գնդակը հարևանի բակն ընկավ:

Պատասխան՝ _____

14. Ինչո՞ւ տղաները չէին կարող հարևանին խնդրել, որ գնդակը վերադարձնի:

Պատասխան՝ _____

15.ա. Ինչո՞վ օգնեց փոքրիկ աղջիկը տղաներին:

Պատասխան՝ _____

բ. Ինչի՞ց ենք մենք իմանում, որ եղբոր վերաբերմունքը նրա հանդեպ փոխվեց:

Պատասխան՝ _____

ՓՈՒՍԱՂԱԿԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ
4-րդ դասարան

ԹԵՍԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԱՈՒՅՎԱԳՐԱՆՔՆԵՐԻ
ՓԵՆՏԱՏՄԱՆ ԶՍՓՈՒՆԻՇՆԵՐԸ

Թեստը բաղկացած է 17 առաջադրանքներից, որոնք երեք տեսակի են՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ, կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ և ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ:

Ընտրովի պատասխան են պահանջում 1-10-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կարճ պատասխան են պահանջում թեստի 11-15-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան են պահանջում 16-րդ և 17-րդ առաջադրանքները, որոնք խնդիրներ են: Այդ խնդիրները լուծելիս աշակերտը պետք է ներկայացնի խնդրի լուծման ամբողջ ընթացքը և կատարի 2-ական քայլ: Յուրաքանչյուր ճիշտ քայլի համար տրվում է 1 միավոր: 17-րդ խնդիրը լուծելու համար համառոտագրելը պարտադիր է: Եթե 16-րդ խնդրի համար տրվում է առավելագույնը 2 միավոր, ապա 17-րդ առաջադրանքի համար՝ 3, որոնցից 1 միավորը տրվում է խնդրի ճիշտ համառոտագրման համար:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը բերվում է 10 միավորանոց համակարգի:

ՓԵՆՏԱՏՄԱՆ ՍԱՆՂԱԿԸ

ՄԱՐԿԸ	ՊԱՆՏԱՄԱՐԸ
1	1
2-3	2
4-5	3
6-7	4
8-10	5
11-13	6
14-15	7
16-17	8
18-19	9
20	10

ԹԵՍՏ
(նմուշ)

Շրջանակի մեջ վերցրո՛ւ 1 – 10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները:

1 | Գտի՛ր այն թիվը, որը պարունակում է 3 հազարյակ, 7 տասնյակ և 5 միավոր:

- 1) 3705
- 2) 3750
- 3) 3075
- 4) 3057

2 | Գտի՛ր ամենամեծ և ամենափոքր քառանիշ թվերի տարբերությունը:

- 1) 8998
- 2) 8999
- 3) 7999
- 4) 8000

3 | Ինչպե՞ս կլիտխլի երկու թվերի արտադրյալը, եթե արտադրիչներից մեկը մեծացվի 7 անգամ:

- 1) կփոքրանա 7 անգամ
- 2) կմեծանա 7 անգամ
- 3) կմեծանա 7-ով
- 4) կփոքրանա 7-ով

4 | Գտի՛ր 4358 թիվը 100-ի բաժանելիս ստացված մնացորդը:

- 1) 8
- 2) 58
- 3) 358
- 4) 85

5 | Ընտրի՛ր տրված թվանշաններից այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն. $2563 < 2 * 63$

- 1) 4
- 2) 5
- 3) 3
- 4) 6

6 | Ընդգծի՛ր այն շարքը, որտեղ թվերը դասավորված են աճման կարգով:

- 1) 3662, 5193, 74287, 64362
- 2) 3662, 5193, 64362, 74287
- 3) 74287, 64362, 3662, 5193
- 4) 74287, 64362, 5193, 3662

7 | Ընդգծի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 4 կմ 7 մ 3 դմ-ը դեցիմետրերով:

- 1) 4073 դմ
- 2) 40703 դմ
- 3) 40073 դմ
- 4) 4730 դմ

8 | *Լայրկյաններով արտահայտի՛ր $\frac{3}{5}$ թ -ն:

- 1) 12 վ
- 2) 36 վ
- 3) 48 վ
- 4) 24 վ

9 | Ուղղանկյան երկարությունը 15 սմ է, լայնությունը՝ 12 սմ: Գտի՛ր ուղղանկյան պարագիծը:

- 1) 27 սմ
- 2) 54 սմ
- 3) 90 սմ
- 4) 180 սմ


10 | Ո՞ր գծապատկերում է $\frac{4}{8}$ մասը ներկված:



1) 2) 3) 4)

11- 15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրի՛ր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

11 | Տրված թվային առանցքի վրա նշի՛ր $D(3)$ և $C(11)$ կետերը: Գտի՛ր DC հատվածի երկարությունը:



Պատ.՝

12 | Գրի՛ր՝ երկու քառանիշ թիվ, որոնք բաժանվում են և՛ 2-ի, և՛ 5-ի:

Պատ.՝

13 | Դի՛ր փակագծերն այնպես, որ դասնա ճիշտ հավասարություն:

$5600 : 800 \quad 40 \cdot 9 \quad 360 \quad 7$

14 | Տրված թվերից հետո գրի՛ր ևս մեկ թիվ ըստ օրինաչափության:

2, 5, 9, 14, ...

Պատ.՝

15 | Հաշվի՛ր $516 \cdot 5 - 9093 : 7 + 119$ արտահայտության արժեքը:

Պատ.՝

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված ներկայացրո՛ւ առաջադրանքներից հետո նշված տեղում:

16 | Ուղղանկյան լայնությունը 16 սմ է, և կազմում է երկարության $\frac{2}{3}$ մասը: Գտի՛ր ուղղանկյան մակերեսը:

Պատ.՝

17 | Միմյանցից 650 կմ հեռավորության վրա գտնվող A և B վայրերից միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին երկու ավտոմեքենաներ: Առաջին ավտոմեքենան շարժվում էր 60 կմ/ժ արագությամբ: Գտի՛ր երկրորդ ավտոմեքենայի արագությունը, եթե նրանք հանդիպեցին 5 ժամ հետո: (Խնդիրը պետք է համառոտագրել):

Պատ.՝

ԴԻՍՈՐԴ

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ Ո՞՞ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԸՍՏ ԲԱԿԱՆԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ)

I. ԸՆԴՈՒՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաքաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաքաղի Հանրապետությանը հատկացված տեղերի (այսուհետ՝ բուհեր) ընդունելության գործընթացը, որը ներառում է բուհերի մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության քննությունների կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը:

2. Բուհերն առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարում են տվյալ ուսումնական տարվա համար Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն:

3. Բուհեր կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք (այսուհետ՝ շրջանավարտ)՝ առանց տարիքի սահմանափակման:

4. Օտարերկրյա քաղաքացիները (այսուհետ՝ օտարերկրացիներ) Լեռնային Ղարաքաղի Հանրապետության բուհեր կարող են ընդունվել համաձայն սույն կարգի (ընդհանուր հիմունքներով) կամ ըստ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կարգի:

5. Բուհեր ընդունվելու համար տվյալ ուսումնական տարվա և նախորդ տարիների շրջանավարտները (այսուհետ՝ դիմորդ) հանձնում են ընդունելության քննություններ: Ընդունելության քննություններն անցկացվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոններում պարտադիր է բժշկի ներկայությունը:

6. Ընդունելության քննությունները միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններ են: Ընդունելության քննությունները և ըստ բուհերի մրցույթը կազմակերպում և անցկացնում է Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ գնահատման և թեստավորման կենտրոն):

Տվյալ ուսումնական տարում դիմորդները ընդունելության քննությունները կարող են հանձնել միայն մեկ անգամ:

(6-րդ կետը լրաց. 25.04.2013 N220-Ն)

7. Միասնական քննություններն անցկացվում են գրավոր, թեստերի միջոցով: Լեռնային Ղարաքաղի Հանրապետության ամբողջ տարածքում դիմորդները յուրաքանչյուր առարկայի միասնական քննությունը հանձնում են միևնույն օրը: Դիմորդները միասնական քննությունները հանձնում են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից:

8. Միասնական քննություններն անցկացվում են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական փուլի միասնական քննությունները տվյալ տարվա փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում

ծում Լեռնային Ղարաքաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտող և նախորդ տարիների շրջանավարտ դիմորդների կողմից հայտագրվող և տվյալ տարվա հունիսին դիմորդների կողմից հանձնվող միասնական քննություններն են: Լրացուցիչ փուլի միասնական քննությունները տվյալ տարվա հունիսի 24-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում դիմորդների կողմից հայտագրվող և տվյալ տարվա հունիսին դիմորդների կողմից հանձնվող քննություններն են:

9. Միասնական քննությունների տևողությունն է՝

1) «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» առարկաների քննությունները՝ 180 րոպե:

2) «Օտար լեզու» առարկայի քննությունը՝ 150 րոպե:

10. Կենտրոնացված քննություններն այն քննություններն են, որոնք հնարավոր չէ անցկացնել թեստերի միջոցով՝ էլեկտրոնային քննական առարկաների առանձնահատկություններին:

11. Կենտրոնացված քննություններն են՝ «Ստեղծագործական աշխատանք» գրավոր քննությունը և «Նախնական զինվորական պատրաստություն» բանավոր քննությունը: (11-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

12. Կենտրոնացված քննությունների տևողությունն է՝

1) գրավոր («Ստեղծագործական աշխատանք») քննությունը՝ 240 րոպե:

2) բանավոր քննությունների ժամանակ յուրաքանչյուր դիմորդին քննելու առավելագույն ժամանակը 30 րոպե է:

(12-րդ կետի 1-ին ենթակետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

13. Բուհերի ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական ծրագրերով, հանրակրթական ուսումնական հաստատություններում պարտադիր օգտագործման երաշխավորված դասագրքերով և խնդրագրերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է գնահատման և թեստավորման կենտրոնը:

14. Ներբուհական են՝

1) Արցախի պետական համալսարանի «Կերպարվեստ և գծագրություն» մասնագիտության մասնագիտական առարկաների քննությունները և «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտության «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» քննությունը:

2) Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Ճարտարապետություն և դիզայն» մասնագիտության «Նկարչություն» և «Գծագրություն» առարկաների քննությունները:

3) Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտության «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» քննությունը:

4) Ստեփանակերտի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի «Հագուստի մոդելավորում» և «Դիզայն» մասնագիտու-

թյունների մասնագիտական առարկաների քննությունները:

15. Ներբուհական քննություններն անցկացվում են սույն կարգի 14-րդ կետում նշված բուհերի կողմից մշակված և Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված մասնագիտական ծրագրերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է գնահատման և թեստավորման կենտրոնը:

16. Սույն կարգի համաձայն բուհերում ընդունելությունը կատարվում է՝

1) պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար)՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի չափաքանակների:

2) բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (այսուհետ՝ վճարովի)՝ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության սահմանած տեղերի:

17. Ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա անվճար և վճարովի ուսուցմամբ մրցույթների արդյունքները հաստատելու, արտոնություն ունեցող դիմորդների ցուցակներն ըստ մասնագիտությունների հաստատելու, անվճար և վճարովի ուսուցման համակարգում թափուր և պահուստային տեղերը վերաբաշխելու նպատակով ստեղծվում է հանրապետական ընդունող հանձնաժողով:

18. Հանրակրթական ուսումնական հաստատությունների այն շրջանավարտները, որոնց ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկան ատեստավորված չէ, ընդունելության քննությունները կարող են հանձնել ռուսերեն թարգմանությամբ միայն լրացուցիչ փուլում, բացառությամբ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և մյուս օտար լեզուների քննությունների:

19. Սույն կարգի պահանջները չեն տարածվում այն պետական բուհերի վրա, որոնք իրականացնում են զինվորական, ոստիկանական մասնագիտական կրթական ծրագրեր:

II. ՄԻԱՍՆԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ

20. Միասնական, կենտրոնացված քննության դիմում-հայտերը լրացնելը, ընդունելը և մուտքագրելը՝

1) դիմորդը միասնական, կենտրոնացված քննությանը մասնակցելու համար լրացնում է միասնական, կենտրոնացված քննության դիմում-հայտ (այսուհետ՝ քննության դիմում-հայտ), իսկ քննության դիմում-հայտը փոփոխելու, ճշգրտելու և հաստատելու համար լրացնում է ցուցակ: Քննության դիմում-հայտի և ցուցակի ձևերը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը:

2) գնահատման և թեստավորման կենտրոնը տվյալ տարվա հունվարի 20-ից առնվազն հինգ անգամ զանգվածային լրատվության միջոցներով (որից երկու անգամը՝ առնվազն 1000 օրինակ տպաքանակ ունեցող թերթերում) հրապարակում է հայտարարություն, որում պարտադիր նշվում են քննության դիմում-հայտերի ընդունումն սկսելու և ավարտելու ժամկետները, ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ դպրոց) անվանումները:

3) դիմորդները քննությանն առնչվող հար-

Հավելված
Լեռնային Ղարաքաղի Հանրապետության
կառավարության 2012 թվականի
մայիսի 14 -ի N 301 - Ն որոշման

ցերի մասին տեղեկատվություն կարող են ստանալ դպրոցներից, Լեռնային Ղարաքաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժիններից (այսուհետ՝ կրթության բաժիններ), գնահատման և թեստավորման կենտրոնից՝ անմիջապես կամ համացանցային կայքի միջոցով:

4) դպրոցը կրթության բաժիններից ու գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում և դիմորդներին է տրամադրում քննությունների դիմում-հայտերը:

5) դիմորդը քննության դիմում-հայտին կցում է անձնագրի, դրա բացակայության դեպքում՝ ծննդյան վկայականի պատճենը, մեկ լուսանկար (3x4 սմ չափսի), յուրաքանչյուր քննության մասնակցության համար գնահատման և թեստավորման կենտրոնի համապատասխան հաշվեհամարին փոխանցված 1500 դրամ վճարի անդորրագիրը և ներկայացնում դպրոցի տնօրենին:

6) դպրոցի տնօրենն ստուգում է դիմորդի կողմից քննության դիմում-հայտի ճիշտ լրացված լինելը, պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դիմորդին տալիս է ստացական:

7) նախորդ տարիների շրջանավարտների քննությունների դիմում-հայտերի ընդունումը կազմակերպվում է գնահատման և թեստավորման կենտրոնում:

8) միասնական, կենտրոնացված քննությունների հայտագրումը կատարվում է հետևյալ եղանակով՝

ա. էլեկտրոնային փոստ ունեցող դպրոցը դիմորդների տվյալները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում էլեկտրոնային կապով:

բ. էլեկտրոնային փոստ չունեցող դպրոցի տնօրենը դիմորդների տվյալները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում տարածաշրջանի՝ այդ նպատակով առանձնացված դպրոցի էլեկտրոնային կապի միջոցով:

9) դպրոցը քննության դիմում-հայտերը, անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը, քննության մասնակցության վճարի անդորրագիրը, անհրաժեշտության դեպքում նաև դիմորդների տվյալներով էլեկտրոնային կրիչները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում կրթության բաժինների միջոցով:

10) գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսվում է տվյալ տարվա փետրվարի 1-ին և ավարտվում տվյալ տարվա մարտի 1-ին:

11) դիմորդի մասին մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու, ճշգրտում, փոփոխություն կատարելու և քննության մասնակցների ցուցակը վերահաստատելու նպատակով գնահատման և թեստավորման կենտրոնը մինչև տվյալ տարվա մարտի 30-ը կրթության բաժինների միջոցով տվյալներն ուղարկում է դպրոց:

21. Քննության դիմում-հայտում փոփոխություն, ճշգրտում կատարելը կամ քննությանն ուղղորդում կատարելը կամ քննությանն ուղղորդում կատարելը կատարվում է միայն դիմում-հայտ ներկայացնելով՝

1) դիմորդը քննության դիմում-հայտում կարող է փոփոխություն, ճշգրտում կատարել կամ քննությանն ուղղորդում կատարել մինչև տվյալ տարվա ապրիլի 5-ը:

2) քննության դիմում-հայտում փոփոխություն, ճշգրտում կատարելու, այն հաստատելու կամ քննությանն ուղղորդում կատարելու կամ քննությանն ուղղորդում կատարելու համար դիմորդը դիմում է դպրոցի

ԴԻՄՈՐԴ

տնօրենին և համապատասխան ցուցակում կատարում փոփոխություն, ճշգրտում: Դպրոցի տնօրենը ճշգրտված, փոփոխված ցուցակները կամ քննության դիմում-հայտերը կնքում և մինչև ապրիլի 10-ը կրթության բաժնիների միջոցով ուղարկում և գնահատման և թեստավորման կենտրոն:

3) գնահատման և թեստավորման կենտրոնը դիմորդների փոփոխված և քննության նոր դիմում-հայտերի հիման վրա տվյալների բազայում (այսուհետ՝ բազա) կատարում է համապատասխան փոփոխություններ:

4) քննության դիմում-հայտերի տվյալների վերջնական մուտքագրումից հետո գնահատման և թեստավորման կենտրոնը պատրաստում է դիմորդների ցուցակներն ըստ քննական առարկաների և կենտրոնների:

5) հաստատված ցուցակների հիման վրա դիմորդներին տրվում են անցաթղթեր, որոնք գնահատման և թեստավորման կենտրոնը մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը ուղարկում է դպրոցներ:

6) անցաթուղթը պարունակում է դիմորդի տվյալները (անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի կամ ծննդյան վկայականի սերիան, համարը, մարզը (շրջանը), դպրոցը, անձնական համարը), լուսանկարը, քննական կենտրոնի գտնվելու վայրը, առարկան, քննության օրը և ժամը:

7) դիմորդն անցաթուղթը ստանում է այն դպրոցից, որտեղ լրացրել է քննության դիմում-հայտ: Անցաթուղթը դիմորդին տրվում է ստորագրությամբ:

III. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՉԱՅՏԵՐԻ ԵՎ ՓԱՏԱԹԳՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

22. Դիմորդները կենտրոնացված և ներբուհական քննություններից, ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունը ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը:

Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդների ընդունելությունը կազմակերպվում է սույն կանոնների համաձայն, և դիմում-հայտի ու փաստաթղթերի ընդունումն իրականացվում է Արցախի պետական համալսարանում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բուհերի այն մասնագիտությունների, որոնց համար նախատեսված են կենտրոնացված և ներբուհական քննություններ, և այդ դիմորդների փաստաթղթերի ընդունումն ու ընդունելությունն իրականացվում է համապատասխան բուհերում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից տրված երաշխավորագրերի հիման վրա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բուհերի ընդունելության կարգի:

(22-րդ կետը խմբ. 25.04.2013 N220-Լ)

23. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են տվյալ տարվա մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ մինչև ժամը 18:00-ն:

(23-րդ կետը փոխ. 25.04.2013 N220-Լ)

24. Օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների, նույն տարվա գարնանային գորակոչից գորացրված դիմորդների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից հունիսի 30-ը՝ մինչև ժամը 18:00-ն:

25. Դիմում-հայտերի հանձնման ընթացքին հետևելու համար գնահատման և թեստավորման կենտրոնը ուղարկում է դիմորդներ՝ բուհերի ներկայացուցիչներից, որոնց ցանկը բուհի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի

տնօրենը: Դիմորդները, առանց գործընթացին միջամտելու, իրավունք ունեն իրենց դիտարկումները ներկայացնել գնահատման և թեստավորման կենտրոն:

26. Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը չեն ընդունվում:

27. Ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերն ընդունման ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չեն:

28. Բուհի ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է բուհի ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով):

29. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ղեկավարը (նախագահ), պրոռեկտորը (տեղակալ): Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, պատասխանատու քարտուղարի տեղակալին (տեղակալներին) և անդամներին նշանակում է ընդունող հանձնաժողովի նախագահը: Ընդունող հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է տեխնիկական անձնակազմի միջոցով:

30. Դիմորդը փաստաթղթերը հանձնելու համար տեխնիկական անձնակազմի կողմից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ մասնագիտությունների ընտրության մասին, ծանոթանում դիմում-հայտը լրացնելու կարգին:

31. Դիմորդը լրացնում է ընդունելության դիմում-հայտը և ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին:

32. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝

1) ստուգում է գորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդների զինվորական հաշվառման փաստաթղթի նշումները տարկետման իրավունքի կամ չգորակոչվելու պատճառի վերաբերյալ, ժամկետային զինվորական ծառայության ավարտի մասին տեղեկանքը և թույլատրում ընդունելու փաստաթղթերը:

2) ստուգում է ընդունելության դիմում-հայտը, այն հաստատում ստորագրությամբ, տալիս է ստացական փաստաթղթերն ընդունելու մասին: Դիմորդը, հանձնելով ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը, ստորագրում է գրանցման մատյանում:

3) դիմորդին հայտնում է քննական թերթիկ ստանալու օրը:

4) ընդունելության դիմում-հայտերն ընդունման հաջորդ օրը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ գրանցման մատյանում նշելով հանձնման ժամանակը, ընդունելության դիմում-հայտերի, մեղալակիրների, միջազգային մրցույթների հաղորդների և բանակից զորացրվածների թիվը:

33. Ընդունելության դիմում-հայտերի հիման վրա գնահատման և թեստավորման կենտրոնում պատրաստվում են քննական թերթիկներ: Ընդունելության դիմում-հայտերը և քննական թերթիկները գնահատման և թեստավորման կենտրոնում հանձնվելուց հետո եռօրյա ժամկետում գնահատման և թեստավորման կենտրոնը դրանք կնքում և վերադարձնում է ընդունող հանձնաժողով: Ընդունելության դիմում-հայտերը և քննական թերթիկները վավերացվում են բուհի կողմից:

34. Քննական թերթիկը դիմորդին հանձնվում է անձնագիրը և ստացականը նրա կողմից ներկայացվելուց հետո, որի համար դիմորդն ստորագրում է մատյանում:

35. Քննական թերթիկը պարունակում է դիմորդի տվյալները՝ անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի կամ ծննդյան վկայականի սերիան, համարը, լուսանկարը, անձնական համարը, պահպանվող միասնական քննությունների ցանկը, կենտրոնացված կամ ներբուհական քննությունները, դրանք հանձնելու օրը և ժամը, հայտագրված մասնագիտությունները, օլիմպիադայի դիպլոմի առկայության փաստը, դիմորդի մեղալակիր լինելու փաստը, ինչպես նաև տեղեկություններ զինվորական ծառայության մասին:

36. Դիմորդը դիմում-հայտի հետ միասին ներկայացնում է՝

1) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ առեստատ կամ դիպլոմ):

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի):

3) փաստաթուղթ զինվորական ծառայության առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաթշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում):

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական), անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ:

5) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու մասին:

6) սույն կարգի 98-րդ և 99-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր:

7) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները:

8) կենտրոնացված և ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

37. Տվյալ ուսումնական տարվա շրջանավարտները, տվյալ տարվա գարնանային գորակոչից զորացրված դիմորդները, օտարերկրացիները, ինչպես նաև միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացած դիմորդներն ավարտական փաստաթուղթը (առեստատ, դիպլոմ) ներկայացնում են մինչև տվյալ տարվա հուլիսի 10-ը: Լրացուցիչ փուլում պետական ավարտական և միասնական քննություններ հանձնող դիմորդները միջնակարգ կրթության մասին առեստատը բուհի ընդունող հանձնաժողովին են ներկայացնում մինչև տվյալ տարվա հուլիսի 13-ը:

38. Սույն կարգի 98-րդ և 99-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդներն ազատվում են ընդունելության քննությունների վճարից:

39. Ընդունող հանձնաժողովն առանձին սոցիալական խմբերի քաղաքացիների կարող է ազատել կենտրոնացված և ներբուհական քննությունների, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար սահմանված վճարից:

40. Գնահատման և թեստավորման կենտրոնն առանձին սոցիալական խմբերի քաղաքացիների կարող է ազատել «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաների միասնական քննությունների վճարից:

41. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաները մրցույթային համարվելու դեպքում

գնահատման և թեստավորման կենտրոնը դիմորդին է տալիս վկայագիր, որը դիմորդը, բուհ ընդունվելու դեպքում, համապատասխան բուհ է ներկայացնում մինչև հուլիսի 10-ը:

IV. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՅՏԱԳՐՈՒՄԸ

42. Դիմորդներն ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ և ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են մասնագիտություններն ըստ ուսուցման անվճար և վճարովի համակարգերի: Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերին՝ մինչև երկու անվճար և մինչև ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտությունների քննությունները:

43. Տվյալ տարվա միասնական քննություններին մասնակցած դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել միայն հաջորդ տարվա համար: Պահպանվելով գնահատականը՝ դիմորդը կարող է նաև վերահանձնել այն և մրցույթին մասնակցել ավելի բարձր գնահատականով: Անբավարար գնահատական ստանալու դեպքում դիմորդը զրկվում է մրցույթին մասնակցելու իրավունքից:

44. Ձորակոչային տարիքը լրացած, միասնական քննություններին և մրցույթին մասնակցած, բայց բուհ չընդունված արական սեռի դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո կազմակերպող ընդունելության քննությունների առաջին մրցույթի համար:

45. Չի թույլատրվում դիմորդի կողմից ներկայացնել մեկից ավելի ընդունելության դիմում-հայտ: Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդները լրացնում են առանձին դիմում-հայտ, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհերի համար ևս դիմում-հայտ ներկայացնելու դեպքում՝ դրանք համարակալվում են ըստ առաջնահերթության: Բազայում նույն դիմորդի՝ մեկից ավելի ընդունելության դիմում-հայտերի առկայության դեպքում տվյալ դիմորդը զրկվում է ընդունելության քննություններին և մրցույթին մասնակցելու իրավունքից:

46. Դիմորդներն ընտրած մասնագիտությունների կրկնվող առարկաների քննությունները հանձնում են մեկ անգամ:

47. Միջնակարգ կրթության աստեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից գնահատական չունեցող դիմորդները (Ա և Ա+ տարբերակները չհանձնած) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն կարող են միասնական քննություն հանձնել օտար լեզուից (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն): «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությանը փոխարինված «Օտար լեզու» առարկան չի կարող հանձնվել տվյալ մասնագիտության միասնական քննությունների ցանկում ընդգրկված «Օտար լեզու» առարկայի հետ: Ընդ որում՝

ԴԻՄՈՐԴ Կ Ա Ր Գ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ Ո՞՞ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏՎԱԾ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԸՍՏ ԲԱԿԱՆԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ)

9) «030700 - Միջազգային հարաբերություններ», «030600 - Լրագրություն», «031000 - Հայոց լեզու և հայ գրականություն», «051000 - Մանկավարժություն և հոգեբանություն», «051100 - Մանկավարժություն և մեթոդիկա», «051300 - Սոցիալական մանկավարժություն», «032300 - Թարգմանչական գործ» մասնագիտությունների դեպքում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությունը պարտադիր է:

2) «032400 - Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության համար սահմանված «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն դիմորդները կարող են միասնական քննություն հանձնել «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) առարկայից:

48. Միջնակարգ կրթության ատեստատում կան համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից (տարեկան, քննական) գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի «Հայոց լեզու» առարկայի տարեկան գնահատականը:

49. Համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի «Հայոց լեզու» առարկայի տարեկան գնահատականը:

50. Երևանի Մ. Հեքիմյան անվան պետական բժշկական համալսարանի դիմորդներին իրավունք է վերապահվում իրենց ընտրությամբ հանձնելու նշված երեք՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» մրցութային քննություններից երկուսը:

51. Սույն կարգի 50-րդ կետում նշված մասնագիտությունների համար մրցութային անցկացվում է դիմորդի կողմից դիմում-հայտում նշված քննությունների հերթականությամբ: Հավասար միավորների դեպքում առավելություն է տրվում դիմում-հայտում առաջինը նշած առարկայի քննական գնահատականին:

V. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ՈՒՂԴԵԼԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԴԵՏ ՎԵՐՑՆԵԼԸ

52. Դիմորդը կարող է ընդունելության դիմում-հայտում փոփոխություններ կատարել մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը՝ ժամը 18:00-ն: Տվյալ տարվա հունիսի 1-ից հետո դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ:

(52-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Լ)

53. Օտարերկրացիները, տվյալ ուսումնական տարում օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններն ավարտած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները, տվյալ տարվա գարնանային գորակոչից գորացրված դիմորդները և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդները դիմում-հայտում փոփոխություններ կարող են կատարել մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը՝ ժամը 18:00-ն: Տվյալ տարվա հունիսի 30-ից հետո դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ:

(53-րդ կետը խմբ. 25.04.2013 N220-Լ)

54. Ընդունելության դիմում-հայտը լրաց-

նելու օրը դիմորդը կարող է անձնագրի և ստացականի առկայության դեպքում հետ վերցնել կամ փոփոխություն կատարել ընդունելության դիմում-հայտում: Իսկ ընդունելության դիմում-հայտը լրացնելու հաջորդ օրվանից սկսած, մինչև ընդունելության դիմում-հայտերի և փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, դիմորդը կարող է հետ վերցնել կամ փոփոխություն կատարել ընդունելության դիմում-հայտում՝ քննական թերթիկի և ստացականի առկայության դեպքում:

55. Ընդունելության դիմում-հայտը հետ վերցնելու կամ դրանում փոփոխություն կատարելու համար դիմորդը դիմում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին: Պատասխանատու քարտուղարն առանձնացնում է դիմորդի անձնական գործը, տալիս վերադարձման թույլտվություն՝ այն վավերացնելով բուհի կնիքով:

VI. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒՄԸ

56. Ընդունելության դիմում-հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ու գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչն ստորագրում են ընդունելության դիմում-հայտերի բազայի մասին ակտ, որում նշվում են ընդունելության դիմում-հայտերի թիվը, քննությունների թիվը, քննությունների համար վճարված ընդհանուր գումարը, քննությունների վարձից ազատված դիմորդների թիվը:

57. Բազայում կատարվող բոլոր փոփոխությունների և ճշտումների մասին կազմվում է արձանագրություն:

58. Բազան էլեկտրոնային կրիչների տեսքով տվյալ տարվա հունիսի 2-ին հանձնվում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ ի պահ:

(58-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Լ)

59. Օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները և տվյալ տարվա գարնանային գորակոչից գորացրված դիմորդների բազան էլեկտրոնային կրիչների տեսքով տվյալ տարվա հունիսի 1-ին հանձնվում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ ի պահ:

60. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը դիմորդների արտոնությունները հաստատող փաստաթղթերի կրկնօրինակները մինչև տվյալ տարվա հունիսի 10-ը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոն:

VII. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԵՎ ՆԵՐՔՈՒՄ ԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՒՄԸ

61. Դիմորդը քննական թերթիկը կորցնելու մասին դիմում է ներկայացնում ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, որը դրա մասին անմիջապես զեկուցում է գնահատման և թեստավորման կենտրոնին:

62. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում և 24 ժամվա ընթացքում դիմորդին է տալիս նոր քննական թերթիկ: Նոր քննական թերթիկում քննության օրերը չեն փոխվում՝ բացառությամբ սույն կարգի 64-րդ կետում նշված դեպքերի:

63. Եթե քննական թերթիկը կորել է քննության օրը, դիմորդն այդ քննությունը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից նոր քննական թերթիկում նշանակված

օրը:

64. Տվյալ առարկայի քննությունների վերջին օրը քննական թերթիկը կորցրած դիմորդին թույլատրվում է քննությունը հանձնել անձը հաստատող փաստաթղթի ու գնահատման և թեստավորման կենտրոնի տվյալների բազայի հիման վրա:

VIII. ՄԻԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

65. Միասնական քննությունների կազմակերպումը՝

1) միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա ապրիլի 15-ը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (այսուհետ՝ նախարար)՝ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի ներկայացմամբ:

2) միասնական քննական կենտրոնների ղեկավարների (այսուհետ՝ կենտրոնի ղեկավար) ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 4-ը հաստատում է նախարարը՝ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի ներկայացմամբ:

3) քննական կենտրոնի ղեկավարը կազմակերպում է քննական գործընթացը տվյալ քննական կենտրոնում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

4) միասնական քննությունների օրերն ըստ առարկաների հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Միասնական քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում:

5) միասնական քննության անցկացման գործընթացի մասնակիցներն են՝ կենտրոնի ղեկավարը, նախարարի լիազորը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը (յուրաքանչյուր 60 դիմորդի համար գնահատման և թեստավորման կենտրոնի առնվազն մեկ ներկայացուցիչ), միասնական քննության ընթացքի կազմակերպիչը (այսուհետ՝ կազմակերպիչ) և պատասխանատու կազմակերպիչը, համակարգչային օպերատորը (այսուհետ՝ օպերատոր) և պատասխանատու օպերատորը, միասնական քննական կենտրոնի հերթապահը (այսուհետ՝ հերթապահ), ովքեր իրենց աշխատանքը միասնական քննությունների ընթացքում իրականացնում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն:

6) միասնական քննական կենտրոնում միասնական քննության ընթացքը քննասենյակում կազմակերպում են գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչները և կազմակերպիչները: Կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի համար տվյալ քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ:

7) համակարգչային աշխատանքները իրականացնում են ուսուցում անցած օպերատորները, որոնք կազմը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը հաստատում է նաև պատասխանատու օպերատորների ցանկը, որոնք իրենց քննական կենտրոնում կազմակերպում են օպերատորների աշխատանքը: Հերթապահների կազմը հաստատում է քննական կենտրոնի ղեկավարը:

8) կազմակերպիչներն ըստ քննական կենտրոնների բաշխվում են քննության նախորդ օրը՝ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչ կազմակերպած վիճակահանության միջոցով: Սույն օրը գնա-

հատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տվյալ քննական կենտրոնի ղեկավարին է հանձնում քննական կենտրոնի կազմակերպիչների ցուցակը:

9) քննական կենտրոնում քննասենյակները համարակալվում են հերթական համարներով: Քննական կենտրոնի դիմորդները բաժանվում են հերթական թվերով համարակալված խմբերի: Խմբում դիմորդների թիվը չի կարող գերազանցել 20-ը: Յուրաքանչյուր խմբի համար քննասենյակում աշխատանքները համակարգում են 1-ական կազմակերպիչներ:

10) քննական կենտրոնի քննասենյակների մուտքի մոտ նշվում են տվյալ քննասենյակի խմբերի հերթական համարները:

11) քննությունը սկսվելուց 1,5 ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը սահմանված ձևի արձանագրությունում գրանցում է կազմակերպիչներին, համակարգչային օպերատորներին և հերթապահներին:

12) քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ կենտրոնի ղեկավարը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչ ներկայությամբ այն առևտրային բանկերից, որոնք իրականացնում են քննական թեստերի փաթեթների պահեստավորում, ստանում է քննական թեստերի փաթեթները: Կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպիչին տալիս է տվյալ քննասենյակի խմբերի համար նախատեսված թեստերի պատասխանների ձևաթղթերի (այսուհետ՝ պատասխանների ձևաթուղթ) ծրարները, խմբերի դիմորդների ցուցակները, որից հետո սկսվում է դիմորդների մուտքը քննասենյակներ:

13) պատասխանների ձևաթղթերի ծրարը պարունակում է՝

ա. պատասխանների 20 ձևաթուղթ, որոնք տրվում են դիմորդներին,

բ. պատասխանների լրացուցիչ ձևաթղթեր, որոնք օգտագործվում են պատասխանների ձևաթղթերի խտանման դեպքերում:

14) յուրաքանչյուր խմբի համար նախատեսվում է պատասխանների լրացուցիչ երկու ձևաթուղթ, որոնք մնում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ:

15) հերթապահներին տեղաբաշխում է քննական կենտրոնի ղեկավարը՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

16) քննության օրը դիմորդը քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ ներկայանում է քննական կենտրոն՝ իր հետ ունենալով անցաթուղթը, անձը հաստատող այն փաստաթուղթը, որը նշված է դիմում-հայտում:

17) դիմորդների մուտքը կենտրոն սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

18) դիմորդն անձը հաստատող փաստաթուղթը և անցաթուղթը ներկայացնում է հերթապահին և նրա հրահանգով մոտենում օպերատորին: Օպերատորը համադրում է անցաթղթի և դիմորդի մասին բազայի տվյալները, բազայում կատարում նշում դիմորդի՝ քննությանը ներկայանալու մասին, իսկ անցաթղթի վրա գրում խմբի համարը: Հերթապահները, պատերին փակցված լրացուցիչ ուղեւաթերը դիմորդներին օգնում են գտնել քննասենյակը և խումբը:

19) դիմորդի մուտքը քննասենյակ կազմակերպվում է ոչ պակաս, քան երկու կազմակերպիչների կողմից: Դիմորդը քննասենյակում չի կարող ունենալ այլ առարկաներ՝ բացառությամբ անձը հաստատող փաստաթղթի և անցաթղթի:

20) դիմորդը մոտենում է իր խմբի կազմակերպիչին և ստանում պատասխանների ձևաթուղթը, ցուցակում ստորագրում իր անվան դիմաց և նստում ըստ վիճակահանության արդյունքի՝ համապատասխան նստարանին:

ԴԻՍՈՐԴ

21) դիմորդներին քննասենյակում տեղավորելուց հետո քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը քննական կենտրոնի ղեկավարից գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ, ստանալով խմբերի թվից համապատասխան թեստերի փաթեթները, դրանք բերում է քննասենյակ: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը թեստերի փաթեթները ցուցադրում է դիմորդներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով փաթեթների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա:

22) քննությունն սկսվելուց 20 րոպե առաջ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու կազմակերպիչը դիմորդների համար ընթերցում է քննասենյակում քննության անցկացման կարգը, տեղեկացնում բողոքարկման տեսակների և կարգի մասին: Դիմորդները պատասխանների ձևաթղթերում լրացնում են իրենց անունը, ազգանունը և անցաթղթերի անձնական համարները: Այնուհետև կազմակերպիչները մոտենում են դիմորդներին, կտրում պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերը, հաշվում և հանձնում քննասենյակի պատասխանատու կազմակերպիչին:

23) քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերն առնվազն երկու կազմակերպիչի մասնակցությամբ հաշվում, ստուգում, այնուհետև տեղավորում է այդ նպատակով ստացված ծրարում՝ ծրարի վրա գրելով քննասենյակի, խմբերի համարները և կտրված մասերի թիվը: **(65-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերը խմբ. 25.04.2013 N220-Ն)**

66. Միասնական քննության անցկացումը՝ 1) թեստերի փաթեթները բացելու համար պատասխանատու կազմակերպիչը հրավիրում է առաջին ցատարաններին ցատած դիմորդներին (նրանցից որևէ մեկի բացակայության դեպքում՝ հաջորդ դիմորդին): Փաթեթների բացման վերաբերյալ արձանագրությունների համապատասխան տողում խմբերի կազմակերպիչները կատարում են նշում, որի դիմաց ստորագրում է փաթեթը բացած դիմորդը:

2) խմբերի կազմակերպիչները բաժանում են թեստերը: Դիմորդը, ստանալով իր թեստը, ստուգում է այն և թեստի շապիկի համապատասխան մասում գրում իր խմբի և ցատարանի համարները: Պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում քննության սկիզբը և ավարտը:

3) միասնական քննությունը Լեռնային Ղարաբաղի Յանրապետության բոլոր քննական կենտրոններում սկսվում է նույն ժամին՝ 9:30-ին:

4) ավելորդ (չօգտագործված, խտանված) քննական թեստերի առկայությունը քննասենյակի պատասխանատու կազմակերպիչին արձանագրում է, հաշվարկում և հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին:

5) միասնական քննության ընթացքում արգելվում է խոսելը, տեղը փոխելը, թեստերը և պատասխանների ձևաթղթերը փոխանակելը, արտագրելը, բջջային հեռախոսներից կամ կապի այլ միջոցներից օգտվելը:

6) միասնական քննության ընթացքում քննասենյակից դիմորդը կարող է դուրս գալ միայն անհրաժեշտության դեպքում՝ զուգարանից օգտվելու կամ վատառողջության պատճառով՝ քննասենյակի պատասխանատու կազմակերպիչի կամ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի թույլտվությամբ և հերթապահի ուղեկցությամբ:

7) քննասենյակում թեստի բովանդակության վերաբերյալ դիմորդի հարցերը չեն քննարկվում:

8) միասնական քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերն ու պատասխանների ձևաթղթերը նորով փոխարինում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը՝ կենտրոնի ղեկավարի, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ՝ արձանագրելով այդ փաստը: Պատասխանների ձևաթղթերը և թեստերի վրա գրվում է «խոտանված է»:

9) դիմորդներին կողմից քննական առաջադրանքներին կատարման ժամանակ քննասենյակներում, բացի պատասխանատու կազմակերպիչից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել նախարարի լիազորը, քննական կենտրոնի ղեկավարն ու գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը:

10) միասնական քննության ավարտից 30 րոպե առաջ քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը դիմորդների ուշադրությունն է հրավիրում ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները թեստերից պատասխանների ձևաթղթերի վրա անցկացնելու մասին:

11) կազմակերպիչները քննության ամբողջ ընթացքում պետք է մնան քննասենյակներում՝ իրենց հատկացված տեղերում: Նրանց արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից և կապի այլ միջոցներից: Սույն պահանջների խախտման մասին գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տեղյակ է պահում կենտրոնի ղեկավարին, որն էլ կարող է հեռացնել կազմակերպիչն քննասենյակից: Կազմակերպիչն քննասենյակից հեռացնելն արձանագրվում է ստորագրվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի և կենտրոնի ղեկավարի կողմից:

12) գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու կազմակերպիչը իրավունք ունի մեկ անգամ նախագրուցանելու դիմորդին, արձանագրելու նախագրուցանումը, կրկնվելու դեպքում, կենտրոնի ղեկավարին տեղեկացնելով, դիմորդին հեռացնելու քննասենյակից, եթե նա առանց թույլտվության դուրս է եկել քննասենյակից, խոսել է այլ դիմորդների հետ, տեղը փոխել է: Եթե դիմորդն օգտվել է բջջային հեռախոսից, կապի այլ միջոցներից, արտագրել է, ապա գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տեղեկացնում է կենտրոնի ղեկավարին և խախտում թույլ տված դիմորդին հեռացնում քննասենյակից:

13) հեռացվող դիմորդից վերցվում է թեստը, դիմորդի պատասխանների ձևաթղթի վրա գրվում է «Չեռացված է քննությունից», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվողի անունը, ազգանունը, հեռացման պատճառը:

14) դիմորդի՝ քննությունից հեռացվելու փաստը դիմորդի բողոքի հիման վրա քննարկվում է նախարարի հրամանով ստեղծված բողոքարկման հանձնաժողովում, որն ընդունում է որոշում դիմորդին լրացուցիչ քննությանը թույլատրելու մասին:

15) միասնական քննության ընթացքում հիվանդության պատճառով (բժշկի թույլտվությամբ) քննությունն ընդհատած դիմորդից վերցվում է թեստը, պատասխանների ձևաթղթի վրա գրվում է «Քննությունն ընդհատել է հիվանդության պատճառով», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրություններում գրանցվում է այդ փաստը՝ նշելով քննությունն ընդհատած դիմորդի անունը, ազգանունը:

16) հարգելի պատճառով միասնական քննությանը չներկայացած (փաստաթղթով հիմնավորված), հիվանդության պատճառով միասնական քննությունն ընդհատած, ինչպես նաև բողոքարկման հանձնաժողովի որոշմամբ լրացուցիչ միասնական քննությանը թույլատրված դիմորդը քննություն է հանձնում լրացուցիչ միասնական քննության օրը:

67. Միասնական քննության ավարտը՝

1) քննության համար նախատեսված ժամանակից շուտ ավարտած (ընդհատած) դիմորդը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի թույլտվությամբ մոտենում է օպերատորին, պատճենահանում պատասխանների ձևաթղթերը, այնուհետև մոտենում իր խմբի կազմակերպիչին: Թեստը և պատասխանների ձևաթղթերը դիմորդը կազմակերպիչին է հանձնում՝ ստորագրելով իր խմբի դիմորդների ցուցակի համապատասխան տեղում: Կազմակերպիչը համեմատում է թեստի

և պատասխանների ձևաթղթում նշված թեստի համարները: Պատասխանների ձևաթղթի պատճենահանված օրինակը դիմորդը պահում է իր մոտ:

2) քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները, յուրաքանչյուր դիմորդի պատասխանների ձևաթղթերը դնելով թեստի մեջ, հավաքում են սեղաններից, այնուհետև ընթերցում են թեստի վրա գրված սեղանի համարը, համապատասխան դիմորդը մոտենում է կազմակերպիչին, վերցնում իր պատասխանների ձևաթղթերը, պատճենահանում, պատասխանների ձևաթղթերը հանձնում իր խմբի կազմակերպիչին, ստորագրում իր անվան դիմաց դիմորդների ցուցակում և դուրս գալիս քննասենյակից: Այդ ընթացքում մյուս դիմորդները մնում են իրենց տեղերում՝ մինչև պատճենահանման իրենց հերթը հասնելը:

3) քննության ավարտից հետո քննասենյակի յուրաքանչյուր խմբից վերջինը դուրս եկող դիմորդի ներկայությամբ խմբի կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերը (օգտագործված, չօգտագործված, խտանված), քննության ընթացքում հիվանդացած դիմորդին տրված բժշկի տեղեկանքը, դիմորդին քննությունից հեռացնելու, ինչպես նաև խտանված ձևաթղթի մասին արձանագրությունները, խմբի դիմորդների ցուցակը հաշվում և հանձնում է պատասխանատու կազմակերպիչին:

4) քննության ժամանակի ավարտից հետո ոչ ուշ, քան 30 րոպեի ընթացքում պատասխանատու կազմակերպիչը լրացնում է տվյալ քննասենյակում անցկացված քննության արձանագրությունը:

5) պատասխանատու կազմակերպիչը խմբերի պատասխանների ձևաթղթերի (օգտագործված, չօգտագործված, խտանված), խմբերի դիմորդների ցուցակների ծրարները, քննասենյակի արձանագրության, պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի ծրարները և թեստերը (օգտագործված, չօգտագործված) հաշվում և հանձնում է կենտրոնի ղեկավարին:

6) կենտրոնի ղեկավարը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի հետ համատեղ, ներկայացված պատասխանների ձևաթղթերը, խմբերի ցուցակները պարունակող և քննասենյակներից ստացված կտրված մասերով ծրարները վերահաշվելով, ձևակերպում է քննական կենտրոնում անցկացված քննության արձանագրությունը:

68. Քննական նյութերի՝ թեստերի, պատասխանների ձևաթղթերի ծրարների, արձանագրությունների տեղափոխումը՝

1) կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպիչի ներկայությամբ ծրարները տեղավորում է համապատասխան արկղում՝ գնահատման և թեստավորման կենտրոն տեղափոխելու համար:

2) քննական կենտրոնի ղեկավարը քննական նյութերը գնահատման և թեստավորման կենտրոն է տեղափոխում քննության ավարտից անմիջապես հետո: Նույն օրվա ընթացքում գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը քննական նյութերը տեղափոխում է Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոն:

3) Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնում քննական կենտրոնի ղեկավարի և քննական կենտրոնում գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի մասնակցությամբ ընդունվում են քննական նյութերը: Պատասխանների ձևաթղթերը հաշվվում և սկանավորվում են: Պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի հաշվումից հետո կազմվում է բոլոր նյութերի հանձնման և ընդունման արձանագրություն:

69. Պատասխանների ձևաթղթերի ստուգումը՝

1) պատասխանների ձևաթղթերն ստուգվում են Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնում՝ համակարգչային սարքավորումների ու ծրագրերի միջոցով:

2) թեստերը չեն ստուգվում: Սկանավորվում, ճանաչվում և գնահատվում են միայն պատասխանների ձևաթղթերը:

3) պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի վերծանումից հետո ստուգման տվյալները գրանցվում են որպես դիմորդի քննական արդյունք:

70. Միասնական քննությունների արդյունքների հրապարակումը՝

1) քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են քննությունից հետո 5-րդ օրը:

2) գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ քննական կենտրոնների, առարկաների և քննությունների մասնակցած դպրոցների:

3) քննական աշխատանքների արդյունքների ցուցակները վավերացվում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից:

4) կենտրոնի ղեկավարն աշխատանքների ստուգման ավարտից հետո գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում է քննություն հանձնած դիմորդների քննական արդյունքների ցուցակը:

5) կենտրոնի ղեկավարը քննական արդյունքների ցուցակը փակցնում է քննական կենտրոնի տեղակայման հաստատության մուտքի մոտ: Միասնական քննությանը մասնակցած դիմորդների քննության ավարտական մասի քննական արդյունքների ցուցակը գնահատման և թեստավորման կենտրոնը կրթության բաժնից միջոցով ուղարկում է դպրոցներ:

6) միասնական քննության ավարտական մասի արդյունքը դպրոցը գրանցում է դիմորդի՝ միջնակարգ ընդհանուր կրթության ատեստատում:

7) դիմորդը քննության արդյունքի մասին տեղեկություն կարող է ստանալ իր դպրոցից, քննական կենտրոնից:

8) միասնական քննություններ հանձնած դիմորդներին տրվում են վկայագրեր, որոնցում նշվում են դիմորդի կողմից միասնական քննություններից ստացված միավորները:

9) վկայագրի ձևը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը:

10) դիմորդները մինչև հունիսի 30-ը վկայագրերն ստանում են դպրոցներից՝ ներկայացնելով քննության դիմում-հայտերի լրացման համար հինգ ընդունված անձնագիրը կամ ծննդյան վկայականը:

71. Միասնական քննության արդյունքների և անցկացման կարգի խախտման բողոքարկումը՝

1) բողոքարկումը կարող է լինել՝ ա. քննության անցկացման կարգի խախտման մասին:

բ. քննության արդյունքի հետ անհամաձայնության մասին:

2) բողոք-դիմումը շարադրվում է ձևաթղթի վրա:

3) միասնական քննության անցկացման կարգի խախտման վերաբերյալ դիմորդը կարող է բողոքել քննության օրը (քննության պահին կամ ավարտից հետո)՝ մինչև քննասենյակից դուրս գալը՝ բողոքը ներկայացնելով պատասխանատու կազմակերպիչին կամ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչին:

4) բողոք-դիմումի պատճենի կամ երկրորդ օրինակի վրա պատասխանատու կազմակերպիչը կատարում է «Ընդունված է՝ բողոքարկման հանձնաժողով ներկայացնելու համար» նշումը և վերադարձնում դիմորդին:

5) պատասխանատու կազմակերպիչը գրում է բացատրություն՝ այն կցնելով բողոք-դիմումին, և հանձնում կենտրոնի ղեկավարին:

6) կենտրոնի ղեկավարը, ստանալով պատասխանատու կազմակերպիչի բացատրությունն ու դիմորդի բողոք-դիմումը, առանձին ծրարով, համապատասխան արձանագրության հետ միասին ներկայացնում է գնահատման և թեստավորման կենտրոն:

7) բողոքարկման հանձնաժողովը, քննարկելով բողոք-դիմումը, այն համարում է հիմնավոր, եթե գտնում է, որ բողոք-դիմումում շարադրված հանգամանքները դիմորդի կողմից առաջարկված քննության արդյունքում պատճառ են դարձել:

ԴԻՄՈՐԴ Կ Ա Ր Գ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՇԵՐՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԸՍՏ ԲԱԿԱՆԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ)

11) 8) բողոքարկման հանձնաժողովը բողոք-դիմումի վերաբերյալ որոշում է ընդունում բաց քվեարկությանը, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայն:

9) բողոքը հիմնավոր համարելու դեպքում բողոքարկման հանձնաժողովը որոշում է ընդունում դիմորդին թույլատրել մասնակցելու լրացուցիչ քննությանը:

10) բողոքարկման հանձնաժողովը չի քննարկում բողոք-դիմումը՝

ա. դիմորդի կողմից իր մեղքով քննական հրահանգների չկատարման հետևանքով առաջացած թերությունների վերաբերյալ,

բ. դիմորդի կողմից պատասխանների ձևաթղթի լրացման ընթացքում թույլ տրված վրիպումների կամ սխալների վերաբերյալ:

11) միասնական քննության արդյունքի հետ անհամաձայնության դեպքում դիմորդն արդյունքների հրապարակման հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ը, կարող է բողոքարկել այն:

12) արդյունքի հետ անհամաձայնության վերաբերյալ բողոք-դիմումը դիմորդն ամենամեծ հանձնում է այն կենտրոնի ղեկավարին, որտեղ հանձնել է քննությունը: Կենտրոնի ղեկավարն ստացված բողոք-դիմումները գնահատման և թեստավորման կենտրոն է տեղափոխում բողոքարկման ժամկետի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում:

13) բողոք-դիմումի քննարկման արդյունքում կարող է որոշում ընդունվել քննության արդյունքի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին: Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա հիմնական փուլի միասնական քննությունների բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո եռօրյա ժամկետում, իսկ միասնական քննությունների լրացուցիչ փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո եռօրյա ժամկետում:

IX. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑՎԱՅՈՒՄԸ, ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

72. Կենտրոնացված ընդունելության քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 24-ից հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում:

(72-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Լ)

73. Կենտրոնացված ընդունելության քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում, որոնց ցանկը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը՝ մինչև տվյալ տարվա հունիսի 15-ը:

74. Կենտրոնացված ընդունելության քննությունների անցկացման համար գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով մինչև տվյալ տարվա հունիսի 20-ը ստեղծվում են առարկայական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ քննական հանձնաժողով):

75. Քննական հանձնաժողովը կազմված է նախագահից, տեղակալից և անդամներից:

76. Քննական հանձնաժողովը կազմում է քննական տոմսերը, տարբերակները և քննական այլ նյութեր, ստորագրում և ծրարում է քննական տոմսերի բնագրերը, որոնք կնքվում են գնահատման և թեստավորման կենտրոնի կնիքով և մինչև տվյալ քննության օրը պահվում գնահատման և թեստավորման կենտրոնում:

77. Քննության ավարտից հետո քննական հանձնաժողովի նախագահը կազմում ու գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացնում հաշվետվություն, որի պատճենը հանձնում է տվյալ բուհի ընդունող հանձնաժողովին:

78. Կենտրոնացված քննության արձանագրությունը պարտադիր կերպով ստորագրում է քննական հանձնաժողովի նախագահը:

79. Կենտրոնացված բանավոր քննության կազմակերպումը, անցկացումը և գնահատականի բողոքարկումը՝

1) կենտրոնացված բանավոր քննության քննական հանձնաժողովի նախագահը քննության օրը բուհի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարից ստանում է դիմորդների ցուցակը:

2) դիմորդները քննասենյակ են մտնում դիմորդների ցուցակում իրենց անունների հերթականությամբ համապատասխան:

3) ցուցակի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, իսկ անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ) և քննական թերթիկի համապատասխանությամբ ստուգում են հանձնաժողովի նախագահը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու քարտուղարը:

4) դիմորդների ցուցակում դիմորդն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում քննատոմսը:

5) քննատոմսն ընտրելուց հետո քննասենյակում դիմորդն ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանը, լրացուցիչ հարցերը և դրանց պատասխանները:

6) դիմորդի պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով: Անբավարար և 8, 18-20 գնահատականները համաձայնեցվում են առարկայական քննական հանձնաժողովի նախագահի հետ:

7) կենտրոնացված քննության աշխատանքները գնահատվում են քննական հանձնաժողովի կողմից՝ քվեարկության միջոցով: Կենտրոնացված բանավոր քննության արձանագրությունը, բացի քննական հանձնաժողովի նախագահից, ստորագրում են ևս երկու քննող դասախոս:

8) կենտրոնացված բանավոր քննության գնահատականը դիմորդին հայտնվում է քննության օրը՝ քննասենյակում: Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկելու քննական հանձնաժողովի նախագահին՝ առանց քննասենյակից դուրս գալու:

9) կենտրոնացված բանավոր քննությունները տեսաձայնագրվում են:

80. Կենտրոնացված գրավոր քննության անցկացումը՝

1) հանձնաժողովի նախագահը կենտրոնացված գրավոր քննության օրն ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարից ստանում է դիմորդների ցուցակը:

2) դիմորդների մուտքը կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոն կատարվում է համաձայն դիմորդների ցուցակի:

3) ցուցակի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, իսկ անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ) և քննական թերթիկի համապատասխանությամբ ստուգում են առարկայական հանձնաժողովի նախագահը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու քարտուղարը:

4) քննական հանձնաժողովի նախագահն ընդունող հանձնաժողովի պատասխանատու

քարտուղարի հետ ճշտում է քննությանը ներկայացած դիմորդների թիվը, որից հետո քննական տետրերը բաժանում են դիմորդներին, բացատրում տիտղոսաթերթի լրացման ձևը:

5) քննական տետրերը բաղկացած են տիտղոսաթերթից և 10 թերթից, ծածկագրված են, կնքված գնահատման և թեստավորման կենտրոնի ու ընդունող հանձնաժողովի կողմից:

6) ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ստուգում է տիտղոսաթերթի ճիշտ լրացումը, կազմում արձանագրություն տիտղոսաթերթերի քանակի մասին: Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը գնահատման և թեստավորման կենտրոնին է հանձնում կնքված տիտղոսաթերթերը, դրանք ապածածկագրվում են, և գրանցված տվյալները մուտքագրվում են բազայում:

7) ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն արձանագրությունը գնահատման և թեստավորման կենտրոնին է հանձնում քննությունից հետո:

8) քննական տարբերակները դրվում են սեղանին, դահլիճից հրավիրվում են դիմորդներ՝ ընտրելու համապատասխան քանակի քննական տարբերակներ: Գործընթացին կարող են ներկա լինել դիմորդների ծնողները:

9) կենտրոնացված գրավոր քննության ամբողջ ընթացքում քննասենյակում պետք է ներկա լինեն քննական հանձնաժողովի նախագահը, տեղակալը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը:

81. Կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքների ստուգումը՝

1) քննության ավարտից հետո դիմորդները քննական տետրերը հանձնում են քննական հանձնաժողովի նախագահին: Պատասխանատու քարտուղարը գրավոր աշխատանքի չլրացված տեղերում նշում է կատարում լատիներեն «գեթ» տառի տեսքով:

2) կենտրոնացված քննության նախագահը դրանք հանձնում է հանձնաժողովի անդամներին՝ ստուգման:

3) ստուգումն իրականացվում է քննության օրը՝ քննասենյակում:

4) ստուգման ընթացքը վերահսկվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կողմից:

5) կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքների ստուգումից հետո քննական հանձնաժողովի նախագահի հսկողությամբ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ստուգում է տետրերում միավորների գումարումը և վերջնական գնահատականի գրանցումը, ապա ծածկագրում տետրերը, կազմում քննական աշխատանքների ծածկագրերի արձանագրությունը երեք օրինակից, որոնց վրա ստորագրում են առարկայական հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալները, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը, պատասխանատու քարտուղարը: Արձանագրություններից երկուսը պատասխանատու քարտուղարը քննական տետրերի հետ միասին պահում է իր մոտ, իսկ բնօրինակը հանձնում քննական հանձնաժողովի նախագահին: Նշված գործընթացը վերահսկվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կողմից:

6) անբավարար, 8, 18-20 գնահատականները համաձայնեցվում են առարկայական քննական հանձնաժողովի նախագահի հետ:

7) առարկայական քննական հանձնաժողովի նախագահի կողմից ստորագրված քննական տետրերի ծածկագրերի արձանագրությունը մուտքագրման համար ներկայացվում է գնահատման և թեստավորման կենտրոն: Հանձնատեղիով տիտղոսաթերթերը և ծածկագրերի արձանագրությունները՝ գնահատման և թեստավորման կենտրոնը կազմում է գնահատականների ցուցակ:

8) գնահատականների ցուցակները կենտ-

րոնացված գրավոր քննության քննական կենտրոնում փակցվում են քննությունը հանձնելու հաջորդ օրը՝ ժամը 16:00-ին:

82. Կենտրոնացված գրավոր քննության գնահատականի բողոքարկումը՝

1) դիմորդը կարող է բողոքարկել իր գնահատականը կենտրոնացված գրավոր քննությունների գնահատականների ցուցակները փակցնելու հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ի ընթացքում:

2) բողոքարկման համար դիմորդը դիմում է ներկայացնում պատասխանատու քարտուղարին: Դիմումների ընդունման ժամկետի ավարտից հետո պատասխանատու քարտուղարը դիմումները հանձնում է քննական հանձնաժողովի նախագահին:

3) դիմումում նշվում է կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի այն հատվածը, որի գնահատման հետ դիմորդը համաձայն չէ:

4) բողոքարկման ժամանակ հանձնաժողովը վերանայում է միայն դիմորդի կողմից նշված հատվածը (հատվածները): Մյուս հատվածների վերանայումը և վերագնահատումը չի թույլատրվում:

5) քննական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի՝ բողոքարկված կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքն ստուգած անդամը քննարկում են կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի բողոքարկված հատվածը՝ դիմորդի և նրա կողմից հրավիրված մասնագետի հետ:

6) բողոքարկված կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքի գնահատականը կարող է բարձրացվել, իջեցվել կամ չփոփոխվել:

7) բողոքարկման արդյունքները լրացվում են գնահատման էջի համապատասխան մասում, պարտադիր գրախոսվում քննական հանձնաժողովի նախագահի կողմից և հանձնվում պատասխանատու քարտուղարին:

8) կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի գնահատականի փոփոխման դեպքում գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացվում քննական հանձնաժողովի նախագահի արձանագրությունը:

9) կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքի բողոքարկման արդյունքը ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, հրապարակվում է կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոնում:

10) կենտրոնացված գրավոր քննության բողոքարկված քննական աշխատանքի վերագնահատման հետ անհամաձայնության դեպքում բողոքարկման արդյունքի հրապարակման հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ի ընթացքում, դիմորդը կարող է դիմել գնահատման և թեստավորման կենտրոնի բողոքարկման հանձնաժողովին:

11) գնահատման և թեստավորման կենտրոնի բողոքարկման հանձնաժողովի կողմից հրավիրված փորձագետը, որը պետք է ունենա տվյալ առարկայից առնվազն հինգ տարվա մանկավարժական գործունեության փորձ և համապատասխան մասնագիտության գիտական աստիճան, ներկայացնում է եզրակացություն, որի հիման վրա բողոքարկման հանձնաժողովը մեկօրյա ժամկետում ընդունում է վերջնական որոշում գնահատականը բարձրացնելու, իջեցնելու կամ նույնը թողնելու մասին:

12) սույն կետի 11-րդ ենթակետով նախատեսված բողոքարկման ընթացքում վերանայվում է կենտրոնացված գրավոր աշխատանքի միայն բողոքարկված մասը:

13) գնահատականի փոփոխման դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ համապատասխան արձանագրություն է ներկայացվում գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենին:

ԴԻՍՈՐԴ

X. ՆԵՐՔՈՒՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱԴՏԱՍԿԱՆԻ ԲՈՂՈՒՔԱՎՈՒՄԸ

83. Ներքուհական ընդունելության քննություններն անցկացվում են տվյալ տարվա հունիսի 24-ից հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում:

(83-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Լ)

84. Ներքուհական ընդունելության քննությունները կազմակերպվում են սույն կարգի 73-78-րդ կետերի պահանջներին համապատասխան՝

1) ներքուհական ընդունելության քննություններն անցկացվում են տվյալ մասնագիտության մասնագիտական առարկաների առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան:

2) ներքուհական ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումն անցկացվում է սույն կարգի 79-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Գծանկար», «Գծագրություն», «Գունանկար», «Նկարչություն» առարկաների քննությունների արդյունքների բողոքարկման, որոնց քննությունների արդյունքների բողոքարկումն անցկացվում է սույն կարգի 82-րդ կետի պահանջներին համապատասխան:

XI. ՆԵՐՔՈՒՏԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԶՆԵՐԿԱՅԱՑԱԾ ԴԻՍՈՐԴՆԵՐԻ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

85. Հարգելի պատճառով ներքուհական քննությանը չներկայացած դիմորդներին թույլատրվում է հանձնել լրացուցիչ քննություն քննացուցակով այդ առարկայից սահմանված քննության օրերին: քննացուցակով տվյալ առարկայից քննություն չլինելու դեպքում դիմորդը դուրս է մնում:

XII. ԲՈՂՈՒՑԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

86. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Միասնական քննություններում դրական են համարվում 7.5 և բարձր միավորները: Բոլոր միավորները գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան:

Կենտրոնացված և ներքուհական քննություններում դրական են համարվում ութ և բարձր միավորները:

87. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաների միասնական քննությունների գնահատականները համարժեքացվում են 20 միավորային համակարգին:

88. Դիմորդն անվճար և վճարովի ուսուցմամբ հայտագրած համապատասխան մասնագիտությունների մրցույթներին մասնակցում է մրցութային քննություններից ստացած դրական միավորների գումարով՝ հարյուրերորդական մասի պահպանմամբ: Այն մասնագիտությունների համար, որոնք ընդունելության քննությունների ցանկում նշված են որպես ոչ մրցութային, դիմորդը մրցութային մասնակցում է այդ առարկաներից դրական միավոր ստանալու դեպքում:

89. Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է մասնագիտությունների համապատասխան ուղղվածությամբ՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտությունների խմբերի, ֆակուլտետների (դեպարտամենտների):

90. Անվճար և վճարովի ուսուցման ընդունելության մրցույթներն անցկացվում են մեկ փուլով:

91. Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է անվճար ուսուցման առաջին հայտագրված մասնագիտության գերակայությամբ:

92. Առաջին հայտագրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար անվճար և վճարովի ուսուցման մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությամբ համապատասխան:

93. Ընդունելության դիմում-հայտում հայտագրված որևէ մասնագիտությամբ (ըստ հայտագրման հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ մասնագիտությունների մրցութային:

94. Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցութային մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության աստեսատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը: Առաջնահերթությունը տրվում է պետական ավարտական քննությունների գնահատականին:

(94-րդ կետը լրաց. 25.04.2013 N220-Լ)

95. Հայաստանի պետական ազդարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի առկա ուսուցման մասնագիտությունների նպատակային ընդունելության անվճար ուսուցման տեղերում՝ հաստատված նախարարի հրամանով և համաձայնեցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հետ, կարող են ընդունվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների գյուղատնտեսական մասնագետների խիստ կարիք ունեցող գյուղական վայրերի՝ տվյալ բնակավայրում գրանցում ունեցող դիմորդները՝ դպրոցների մանկավարժական խորհուրդների և շրջանների վարչակազմերի կրթության բաժնիների կողմից տրված երաշխավորագրով:

Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում և Հայաստանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրանցում ունեցող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններն ավարտած դիմորդները:

Հայաստանի պետական ազդարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի ընդունելության նպատակային անվճար տեղերի և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերի դիմորդների և նրանց ծնողների հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճյուղային նախարարների, կնքում է պայմանագիր՝ բուհի ավարտելուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մասնագիտությամբ աշխատելու վերաբերյալ:

96. Մրցութային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

- 1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին:
- 2) արվեստի գծով միջազգային և հանրապետական մրցույթների հաղթողներին:
- 3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին:
- 4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհերի առկա ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկում բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին:

5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին:

6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

97. Բուհերի այն մասնագիտությունների գծով, որոնց քննությունների անվանացանկում առարկաները նշված են մեկ (մաս անվճար ուսուցման մրցութային մասնակցելու համար) և երկու աստղանիշով, վճարովի ուսուցման թափուր տեղերի մրցութային մասնակցելու համար՝

1) մրցութային և ոչ մրցութային քննությունների գնահատականներ են համարվում միջնակարգ կրթության աստեսատի, միջին մասնագիտական (հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով) կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի տվյալ առարկաների պետական ավարտական քննական գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը,

2) 10 միավորային համակարգով տարեկան գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

- ա. «4»-ը, «5»-ը և «6»-ը համարժեք են 13 միավորի,
- բ. «7»-ը և «8»-ը համարժեք են 17 միավորի,
- գ. «9»-ը և «10»-ը համարժեք են 20 միավորի,

3) միջնակարգ կրթության աստեսատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի 5 միավորային համակարգով գնահատված տարեկան քննական գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

- ա. «3»-ը համարժեք է 13 միավորի,
- բ. «4»-ը համարժեք է 17 միավորի,
- գ. «5»-ը համարժեք է 20 միավորի,

98. Քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մրցութային դուրս ընդունվում են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության միասնական քաղաքացիների համաձայն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության միասնական քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունների կողմից տրված տեղեկանքների:

99. Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

1) 1-ին ու 2-րդ խմբերի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անծինք՝ համաձայն բժշկասոցիալական փորձաքննության կենտրոնի կողմից տրված եզրակացության:

2) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

100. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում՝

- 1) անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցութային դուրս (առանձին մրցութային)՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի:
- 2) անվճար ուսուցման մրցութային դուրս

մնալու դեպքում դիմորդները վճարովի ուսուցման մրցութային մասնակցում են ընդհանուր հիմունքներով:

3) եթե հայտագրել են միայն վճարովի ուսուցման տեղեր հատկացված մասնագիտություններ՝ բուհ են ընդունվում մրցութային դուրս:

101. Առանց ընդունելության քննության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հատկացված պաշտպանության տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով միջազգային օլիմպիադաների հաղթողները, տարբեր մարզածների գծով աշխարհի և եվրոպայի առաջնությունների մրցանակակիրները, ովքեր ընդունելության դիմում-հայտում հայտագրել են համապատասխան մասնագիտությունները:

102. Անվճար և վճարովի ուսուցման մրցութային արդյունքներն ամփոփվում են մինչև տվյալ տարվա հուլիսի 15-ը:

103. Ներքուհական քննությունների արդյունքներով մրցութային անցկացվում է համապատասխան բուհում: Մրցութային արդյունքը հաստատվում է հանրապետական ընդունող հանձնաժողովում, որից հետո բուհի ղեկավարը հրամանագրում է ուսանողներին:

104. Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից ընդունելության քննությունների մրցութային արդյունքները հաստատելուց հետո, բուհերում թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննություններից դրական միավոր (ներ) ստացած, սակայն մրցութային դուրս մնացած դիմորդները հուլիսի 15-20-ն ընկած ժամանակահատվածում կարող են մասնակցել թափուր տեղերի մրցութային՝ թափուր տեղեր ունեցող բուհում լրացնելով նոր դիմում-հայտ:

105. Բուհի պատասխանատու քարտուղարը հուլիսի 21-ին գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացնում թափուր տեղերի մրցութային դիմում-հայտերը:

106. Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում թափուր տեղերի մրցութային արդյունքները հաստատում է հուլիսի 25-ին:

XIII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

107. Ընդունելության քննությունների հանրապետական ընդունող հանձնաժողովը կազմված է 12 անդամից: Հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարն է: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարն է: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի աշխատակազմի ներկայացուցիչը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ներկայացուցիչը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը, գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը, բուհերի ղեկավարները և պատասխանատու քարտուղարը: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

108. Հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ՝

1) հաստատվում են անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցութային արդյունքները:

2) հաստատվում են սույն կարգի 98-101-րդ կետերին համապատասխան արտոնություններից օգտվող դիմորդների ընդունելության արդյունքները:

3) վերաբաշխվում են մրցութային արդյունքներով անվճար, վճարովի ուսուցման համակարգում թափուր մնացած տեղերը, ինչպես նաև անվճար, վճարովի համակարգի պահուստային տեղերը:

ՆՈՐԵՆՅԱՆ

ԲԱՆ ԵՄԱԿ ԼՂՅ ՎԱՍՏԱԿՎՈՐ ՄԱՆԿՎԱՐԺ ԽՈՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Կերպ լինել չէր կարող: Գյուղի Տու- մին է՝ թառած Քիրսա սարի անտա- ռապատ լանջերին, հայացքը հա- ռած Դիզակայտի գագաթին Աստծո խորհուրդներն ունկնդրող սրբատա- նը, աջ թևի տակ Բագրատունյաց զուլալ աղբյուրը, ձախ թևին՝ Թբու ջուրը, որի շուրջ որս է արել Արցախի քաջը իշխան Եսայի Ապու Մուսեն ու «Չայր մերն» էլ արտաբերել Գտչա- վանքում, որի կառուցմանը հուսա- վառ մասնակցել են նաև Քո նախնի- ները: Այո, այլ կերպ լինել չէր կարող: Ինչո՞ւ չնշել նաև Քո համագյուղացի, ազգանվեր ու ազգափրկիչ քաջե- ռից մեկի՝ Թևան Ստեփանյանի անունը: Ամեն անգամ նրա մասին գրուցելիս, թեկուզ ինքը երդվյալ կո- մունիստ էիր, զգուշավորությամբ հաստատում էիր. «Եթե 1918-1920 թվականներին չլիներ Թևան Ստե- փանյանը, թուրքերը կավերեին Դի- զակը՝ ոչնչացնելով մեր ազ- գաբնակչությանը»: Միաժամանակ ասում էիր. «Գալու է ժամանակը, մեր հերոս Թևանը ոչ միայն գնա- հատվելու է արժանվույնս, այլև հուշարձանվելու է իր ծննդավայր Տումի գյուղի կենտրոնում»: Ժողո- վուրդն ասում է՝ պտուղը ծառից հե- ռու չի ընկնում: Քո օրինակը ևս այդ իմաստության վկայությունն է: Քո ստեղծած ու հրատարակած «Տու- մի» շատ արժեքավոր գործում այն- պիսի ու այնքան օրինակներ ես բե- ռել, որոնցով կարող է հպարտանալ ուզածդ բնակավայր ու երկիր:

Խորեն Իսահակի...

Ամեն անգամ ծանոթանալով Քո հարուստ կենսագրությանը, հիաց- մունքով է պարտավում սիրտս: Լի- նելով բանվորի զավակ՝ դեռ ման- կուց ես զգացել աշխատանքի կա- ռիքը և աշխատասիրության արա- ռող ուժը: Այդ համոզմունքի շնորհիվ է, որ հաջողությամբ 1946-ին ավար- տեցիր հայրենի գյուղի միջնակար- գը, 1949-ին՝ Ստեփանակերտի եր- կամյա ուսուցչական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ավար- տելուն պես գնացիր Չայրուբի շր- ջանի ծայրամասային Դոլանլար գյուղը և երկու տարի ուսուցչություն արեցիր յոթամյա դպրոցում՝ ձեռք բերելով գործնական աշխատանքի անհրաժեշտ փորձ: Զբավարարվե- ցիր ձեռք բերածով: Ուսումը շարու- նակեցիր հեռակա կարգով: Ստաց- վեց այնպես, որ 1951թ. գորակոչվե- ցիր խորհրդային բանակ: Ծառայե- ցիր Վիննիցայի մարզի Խմելնիկ քա- ղաքի ավտոմեխանիկների հատուկ դպրոցում՝ որպես ուսումնական ջո- կի հրմանատար:

Արժանանալով հրամանատա- րության վստահությանն ու հավա- նությանը՝ գործուղվեցիր ԳԴԳ-ում տեղակայված խորհրդային զորքե- ռի 2-րդ տանկային բանակի դիվի- զիայում շարունակելու ծառայու- թյունը՝ որպես դասակի հրամանա- տար: Աստեղային եղան այնտեղ Քո անցկացրած երեք տարիները, քան- զի ընդհանուր հրամանատարը գե- ներալ Չամազասպ Բաբաջանյանն էր, և ծանոթացել էիք միմյանց հետ որպես հայրորդիներ:

Քո ստացած բազմաթիվ խրա- խուսանքները՝ որպես մարտական և քաղաքական պատրաստության առաջամարտիկ, Քո գերազանցու- թյան դիպլոմը՝ որպես դիվիզիայի հեռակա կուսակցական դպրոցի շր- ջանավարտ, խոսում են Քո պա- տասխանատվության ու նպատա- կասլացության մասին:

1954-ին գորացրվելով զինծա- ռայությունից՝ ունանց պես չմնացիր հեռուներում, վերադարձար մեր ան- փոխարինելի Արցախ ու շարունա- կեցիր մանկավարժական գործու- նեությունը Էդիլու, Մեծ Թաղեր, Բլուբան գյուղերում՝ դասավանդե- լով «Պատմություն» և «Ռուսաց լե- զու» առարկաները:

Խորեն Իսահակի...

Ես չեմ կարող խորին շնորհակա- լությամբ ու սրտաբուխ երախտա- գիտությամբ չնշել Քո այն նվիրումը, որ Դու ցուցաբերեցիր իմ հայրենի Աղբուլաղ գյուղի ութամյա դպրո- ցում, ուր սովորել եմ 1937-1944 թվականներին: Դու 1960-1982 թվա- կաններին ոչ միայն դրսևորեցիր Քո անսպառ տաղանդը՝ որպես տնօ- րեն, այլև Քո նախածեռնությամբ 1963թ. կառուցվեց երկհարկանի տիպային դպրոցական շենք, և այ- նուհետև դարձրիր միջնակարգ: Ենթին կից ստեղծեցիր հարուստ ուսումնափորձական հողամաս, ինքը Քո ձեռքով պատվաստեցիր մրգատու տարբեր տեսակի ծառեր, տնկել տվիր խաղողագի՝ արժանա- նալով ծնողների շնորհակալությա- նը և Արցախի ղեկավար մարմիննե- ռի խրախուսանքին: Այդ եմ վկայում Քո ղեկավարած կրթօջախի ստա- ցած բազմաթիվ դիպլոմները:

Խորեն Իսահակի...

Ժողովուրդը ամենամեծ փիլիսո- փան է: Նա է սերունդների կտակել այս խորհուրդը ևս. «Մարդ կա, որի յուրաքանչյուր ոտնահետքի վրա ծաղիկներ են բուսնում»: Այս գնա- հատակաճը վերաբերում է նաև Քեզ: Դու ուղիղ 22 տարի ոչ միայն հա- ռուստ գիտելիքներ նվիրեցիր իմ

հայրենի գյուղի մատաղ սերնդին, այլև դարձար մեր օրինակելի ոչ թե փեսան, այլ զավակը: Ամուսնանա- լով հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, մեր գյուղի վառ աստ- ղերից մեկի՝ Էմմա Սարգարյանի հետ՝ հրաշքեր գործեցիք և՛ դպրո- ցական, և՛ գյուղի մշակութային կյանքում: Դու դարձար մեր գյուղի Արքա Լիրը՝ ժողովրդին պարզաբոլ- քեք դուստրեր, որոնք գնացին Ձեր ճանապարհով, դառնալով մանկա- վարժներ: Սակայն Դու, առանձնա- պես Դու, Քո անհանգիստ ոգին ըն- ծայեցիր նաև գյուղի պատմության ուսումնասիրությանը: Այդ Դու կազ- մակերպեցիր հնագիտական պե- ղումներ գյուղի տարածքում, ստա- ցար հարուստ պատմական նյութ, բնակիչներից հավաքեցիր բավա- կանին առարկաներ ու փաստաթղ- թեր և ստեղծեցիր պատմության թանգարան՝ 2000 ցուցանմուշնե- րով, որի բացումը տեղի ունեցավ 1977-ին, որի ժամանակ ներկա էինք մարզային ժողովրդության բաժնի վարիչ, երջանակահիշատակ Ս. Արամյանը և ես: Ի՞նչ պատմական, ամենոռնակի օր եր:

Խորեն եղբայր...

Այդքանով ևս չբավարարվեցիր: Ձեռնամուխ եղար գյուղի պատմու- թյան ուսումնասիրությանը՝ արդ- ունքում հրատարակելով «Աղբու- լաղ» աշխատությունը, որի խմբագ- րելը շնորհակալությամբ ստանձնե- ցի ես: Քո խոհեմության շնորհիվ դպրոցն ունեցավ ուսուցչական հա- մերաշխ կուլեկտիվ, գործում էին ու- սուցչական և աշակերտական թա- տուրական խմբակներ: Ներկայա- ցումներից և դպրոցամերձ այգուց ստացած եկամուտների հաշվին աշակերտների համար կազմակեր- պում էիք էքսկուրսիաներ դեպի Երևան, Ստեփանակերտ, Շուշի, Ազդիսի քարանձավ, Գուշավանք և այլ տեսարժան վայրեր: Այդ ամենի շնորհիվ է, որ Աղբուլաղում (այժմ՝ Ակնաղջուր) երախտագիտությամբ անվանում են՝ «Ղազարյանի դպրո- ցը», «Ղազարյանի դպրոցամերձը», «Ղազարյանի թանգարանը»: Ես ևս սիրով միանում եմ այդ արժանի ան- վանումներին:

Կյանքիդ վերընթաց ճանապար- հը շարունակվում էր՝ հարստանա- լով հայրենասիրության խոսուն էջե- րով: 1982թ. Քեզ տեղափոխեցին Տումու միջնակարգ դպրոց՝ որպես տնօրեն, որը հիմա կրում է Քո պան- ծախի հայրենակից, լեզվաբան, ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անունը: Նույն եռանդն ու աշխատա-

սիրությունն էր Քո մեջ եռում, ուշադ- րությանդ կենտրոնում էր ուսման բարձր որակը, ուսուցիչների համե- ռաշխությունը, աշակերտների գի- տակցական կարգապահությունը: Վերանորոգեցիք դպրոցական շեն- քը, ձեռք բերեցիք սպորտային հար- մարանքներ: Կուլեկտիվի հետ օգ- նում էիք նաև գյուղի տնտեսության աշխատանքներին:

Խորեն Իսահակի...

Գոյություն ունի ռուսական մի առած, որն ասում է. «Մեծ նավին՝ մեծ նավարկում», որը կարելի է օգ- տագործել նաև Ձեզ բնութագրելիս: 1955 թվականին Չայրուբի կուսբյուրոյի որոշմամբ ընդունվելով ՍՄԿԿ շարքերը, Դու ծավալեցիր հասարակական բազմաբնույթ գոր- ծունեություն: Երկար տարիներ անընդմեջ աշխատեցիր որպես նվիրյալ պրոպագանդիստ և «Գիտե- լիք» ընկերության Ուխտածորի սկզբնական կազմակերպության նախագահ, պարզապարզեցիք պատվոգրերով, կրծքանշաններով ու թանկարժեք նվերներով:

Հիմա, որպես աշխատանքի վե- տերան, 20-րդ դարի Արցախի լավա- գույն մանկավարժ, ԼՂԳ կառավա- րության Եղիշեի անվան մրցանակի դափնեկիր՝ «Տումի» աշխատության ղեկավար ԼՂԳ վստակավոր ման- կավարժ տիկնոջդ հետ վայելում ես հանգիստը Քո հայրենի գյուղում, սրտիդ ու հոգուդ փեշերին առած այն փայլուն էջերը, որ հորինել ես Դու մաքուր խղճով ու նվիրումով, երկրի ու ժողովրդի առջև բացճա- կատ, ազատ ու անկախ ապրող, մեզ բուրդիս համար անփոխարինելի Արցախ աշխարհի անկասելի ըն- թացքով հպարտ, Քո դաստիարա- կած նահատակ-ազատամարտիկ- ների հետ ցավով ու խանդաղա- տանքով գրուցելով, Քո բաժին լու- սառաք խաչը գոհունակությամբ կրելով:

Հանձնված եմ, որ Քեզ հղած քա- ջառողջության, երկարակեցության, երեխաներիդ ու թոռներիդ հետ եր- ջանիկ օրեր վայելելու իմ բարեմաղ- թանքներին կմիանան Քո գործըն- կերները, Արցախի անունն ու արժա- նապատվությունը բարձր պահող Քո հազարավոր սաները և հարազատի զգացումով կասեն. Ա Ս ԵՆ:

Սուկրապ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտություն-
ների դոկտոր, պրոֆեսոր
ԼՂԳ գիտության վաստակա-
վոր գործիչ

Մեծարգո Խորեն Իսահակի...
Զգիտեմ, սպասում էիր մեծար- ման մասն գրելաձևին, թե՛ ոչ: Ե՛հ չուն ասած, ես էլ չէի որոշել՝ լրագրության որ ժանրով բացել գրույցս ընթերցողի հետ՝ Քո մասին, Քո անցած դժվարին, բայց պատվա- բեր ճանապարհի մասին, մի մարդու մասին, որի կյանքի իմաստը պայ- մանավորված է հայրենի երկրին ու ժողովրդին անմնացող ծառայելու, մի քանի արժանավայել սերունդ դաստիարակելիս անձնական վարք ու բարքով օրինակ դառնալու անժխտելի փայլատակուններով:

Դու մեր այն մտավորականնե- րից ես, ում անունն ու գործը ոչ միայն պատիվ են բերում երկրին, այլև դառնում են ժողովրդի ինքնա- ճանաչման ու զորացման հավերժու- կան դաս ու խորհուրդ: Հիրավի, այդպես է, Խորեն Իսահակի: Զեմ թաքցնում... Որպես բանաստեղծ ու գրականագետ-մանկավարժ, Արցա- խի որ դպրոցում եղել եմ, ում հետ գրուցել ու խոսք եմ բացել Քո մա- սին, բոլորը ճանաչել են Քեզ ու հար- գալից արտահայտվել քո մասին: Դու էլ լավ գիտես, որ մարդու եր- ջանկությունը հենց դրանով է պայ- մանավորված, և անվան գեղեցկու- թյունն ու հմայքը կայանում է հենց դրանում:

Խորեն Իսահակի...
Ինչքան էլ ձգտեմ չնշել տարիքդ, չի ստացվի: Համ էլ Աստծուն բարով չեն տա: Փառք Ամենակատարյալին ու Ամենավսեմին... Ապրիլի 28-ին դարձար 85 տարեկան ու երբեք Տի- րոջ ծիրից դուրս չես եկել և ուշքդ ու աչքդ դրսի վրա չես պահել, թեզ դրսևորել ես արցախյան նամուսի մաքուր պիտակով, ծնողներին պաշտող զավակի անբիծ խղճով, երկրի ունեցած-չունեցածով բավա- րարվող, ինչպես ասում են՝ աչքդ կուշտ, սիրտդ բաց: Համ էլ՝ այլ

ԴԱՍ - ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերջերս Շուշիի Արսեն Խաչատրյանի ան- վան պետական հումանիտար թուեջի «Թարգ- մանություն և գործավարություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողները՝ դասախոս Անտիկ Հայրապետյանի հետ կազմակերպել էին գրքի քննարկում «Օտար լեզու (ընթերցանություն)» առարկայից: Քննարկման թեման OSCAR WILDE «The picture of Dorian Gray» ստեղծա- գործությունն էր:

Ուսանողները դասախոսի հետ միասին ըն- թերցել էին գիրքը, ամեն մի գլուխ առանձին թարգմանել, քննարկել, առանձնացրել գեղե- ցիկ հատվածները: Անգլիական գրողի ստեղ- ծագործական ոճը հոգեհարազատ է դարձել ուսանողներին և հնարավորություն են ունեցել ծանոթանալու այդ լեզվի ոճական առանձնա- հատկություններին: Գիրքն ընթերցելուց հետո կազմակերպել էին գրքի քննարկում և ամփո- փում բաց դասի տեսքով: Դասի ընթացքում ուսանողներն արտահայտեցին իրենց կար- ծիքները ընթերցած գրքի վերաբեր-



յալ առանձնացրին դրական և բացասական հերոսներին, նկարագրեցին նրանց բնավորության էական գծերը և նրանց լավ ու վատ արարք- ներից նրանք այնպիսի դա- սեր քաղեցին, ինչը հետագա- յում իրենց անհրաժեշտ կլի- նի:

Դասի երկրորդ մասում դասախոսը ուսանողներին հաղորդեց նոր նյութը՝ նվիր- ված պատմական Հայաստա- նի մայրաքաղաքին, բնույթա- նը, վանքերին, տեսարժան վայրերին, լեռներին: Քանի որ ուսանողները քաջատեղյակ էին իրենց բնաշխարհին, ակ- տիվ մասնակցեցին նոր դասի հաղորդմանը, և այն մատուց- վեց ուսանողների միջոցով:

Նրանք քարտեզի օգնությամբ կարողացան Հայաստանն ամբողջությամբ ներկայացնել լանդլեթեն լեզվով, և որ շատ կարևոր է՝ ճիշտ առոգանությամբ:

Բաց դասի վերջում ներկաները դիտեցին «The picture of Dorian Gray» ֆիլմից մի դր- վագիսկ ֆիլմի ամբողջ դիտումը կազմակեր- պեցին հաջորդ օրը, թուեջի համակարգչային լսարանում, ինչը էլ ավելի խորացրեց ուսա- նողների տպավորությունները գրքի վերաբեր- յալ:

Ուսանողների բուռն քննարկումներից և ներկա գտնվողների դրական արձագանքնե- րից կարելի է անվերապահորեն եզրակացնել, որ բաց դաս-գրքի քննարկումը կայացել է:

Նարինե ԱՎԱՆԵՍՅԱՆ
Շուշիի Ա.Խաչատրյանի անվան
Պետական հումանիտար թուեջի
«Թարգմանություն և գործավարու-
թյուն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՅՈՒՆ

Ի.Ֆ.ՇԱՐԻՓԻՆԻ «ԵՐԿՐԱՋԱՓՈՒԹՅՈՒՆ 12» ԴԱՍԱԳՐՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ՄԵԿԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ


Գործող ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի Ի. Ֆ. Շարիֆինի «Երկրաչափություն 12» դասագրքի կարևորագույն և հետաքրքիր թեմաներից մեկը մարմինների ծավալների հաշվումն է...

Խնդիր 12. (դ) r հիմքի շառավիղ ունեցող երկու գլանների առանցքերը հատվում են և փոխուղղահայաց են: Չտեք նրանց ընդհանուր մասի ծավալը: (Չլանի ծնորդները բավականաչափ երկար են):

Հիշեցնենք Կավայերիի սկզբունքը մարմնի ծավալի հաշվման համար:


Եթե երկու մարմիններ տարածության մեջ կարելի է դասավորել այնպես, որ տված հարթությանը զուգահեռ ցանկացած հարթություն հատում է այդ մարմիններն այնպիսի պատկերներով, որոնց մակերեսների հարաբերությունը հաստատուն է, ապա այդ հաստատունին հավասար կլինի նաև այդ մարմինների ծավալների հարաբերությունը:

Բերված խնդրի լուծումը ոլորտին չէ աշակերտների համար մի քանի պատճառներով: Նախ դժվար է գծագրել հարթության վրա



Նկ. 1 Հատվող գլաններ Նկ. 2 Գլանների հատումը՝ «բարձ»

եռաչափ տարածական հատվող գլանները, ինչպես նաև նրանց ընդհանուր մասը, (Նկ.1, Նկ. 2): Հաջորդ քայլում պետք է կատարել երկրաչափական մարմնի ընտրությունը, որը թույլ կտա կիրառել Կավայերիի սկզբունքը խնդրը լուծելու համար: Այսինքն, պետք է ընտրել մի մարմին, որի հատույթի մակերեսն ու ծավալի հաշվումը



Նկ. 3

հայտնի է, ընտրել այդ մարմնի դիրքն այնպես, որ «բարձի» հետ կիրառվի Կավայերիի սկզբունքը:

Որպես այդպիսի մարմին ընտրենք r շառավիղով գունդը:

Տեղադրենք r շառավիղով գունդ, որի կենտրոնը պատկանում է գլանների առանցքերի α հարթությանը՝ և կառուցենք օբյեկտների՝ «բարձ»-ի կենտրոնից և գնդի կենտրոնից x հեռավորության վրա α հարթությանը զուգահեռ հարթություն: Հատույթներում կստանանք «բարձ»-ի համար քառանկյունի ABCD-ն, իսկ գնդի համար՝ MN տրամագծով շրջան, (Նկ. 3):

ABCD հատույթը զուգահեռագիծ է, որովհետև այդ քառանկյան հակադիր կողմերը միևնույն գլանի ծնիչներ են, որոնք զուգահեռ են իրար: Իսկ գլանների շառավիղների հավասարությունից և գլանների առանցքերի փոխուղղահայացությունից հետևում է, որ ABCD զուգահեռագիծը քառակուսի է:

Դիտարկելով x և r կողմերով ուղղանկյուն եռանկյունները (Նկ. 3)

կստանանք, քառակուսու և շրջանի մակերեսների համար համապատասխանորեն հետևյալ արժեքները՝

S_քառ. = (2*sqrt(r^2 - x^2))^2; S_շրջ. = pi*(sqrt(r^2 - x^2))^2;

Կավայերիի սկզբունքի համաձայն՝

V_քառ. / V_գունդ = S_քառ. / S_շրջ. = ((2*sqrt(r^2 - x^2))^2) / (pi*(sqrt(r^2 - x^2))^2) = 4 / pi;

V_քառ. = 4/pi * V_գունդ = 4/pi * 4/3 * pi * r^3 = 16/3 * r^3;

Հաջորդ եղանակով լուծելու համար մեզ անհրաժեշտ է Նյուտոն - Սիմպսոնի բանաձևը:

Նյուտոն - Սիմպսոնի բանաձևի ամենակարճ արտածումը հենված է մարմնի ծավալի հաշվման ինտեգրալային բանաձևին՝

V = integral_a^b S(x) dx, (1)

որտեղ S(x)-ը մարմնի Ox կոորդինատային առանցքին ուղղահայաց հատումից ստացված հատույթի մակերեսն է: S(x) ֆունկցիան անընդհատ է թվային [a, b] հատվածի վրա:

Թեորեմ: Եթե մարմնի զուգահեռ հատույթի S(x) մակերեսները բավարարում են S(x) = ax^2 + bx + c, 0 <= x <= h, պայմանին, որտեղ x-ը հատույթի հեռավորությունն է սկզբնական հարթությունից, իսկ a-ն, b-ն և c-ն հաստատուն թվեր են, ապա մարմնի V ծավալը հավասար է

V = h/6 * (S_1 + S_2 + 4S), (2)

որտեղ S_1 = S(0), S_2 = S(h), S = S(h/2):

Ապացուցում: Ըստ (1) բանաձևի

V = integral_0^h S(x) dx = integral_0^h (ax^2 + bx + c) dx = 1/3 ah^3 + 1/2 bh^2 + ch =

h/6 (2ah^2 + 3bh + 6c):

Քանի որ,


S_1 = S(0) = c, S_2 = S(h) = ah^2 + bh + c,

S = S(h/2) = 1/4 ah^2 + 1/2 bh + c, 4S = ah^2 + 2bh + 4c;

ապա,

S_1 + S_2 + 4S = 2ah^2 + 3bh + 6c:

Բանաձևի կիրառության անհրաժեշտ պայմանը S(x)-ի քառակուսեղիկությունն է:



Նկ. 4


Այդ հրաշալի բանաձևը կրում է անգլիացի երկու մաթեմատիկոսների՝ Իսահակ Նյուտոնի (1643 -1727) և Թոմաս Սիմպսոնի (1710 -1761) անունը:

Խնդիր 12. (դ) - ի լուծման II եղանակ: Լ ու ծ ու մ:

Գլանների հատումից առաջացած մարմինը բաղկացած է չորս հավասար մասերից, որոնցից յուրաքանչյուրը կարելի է կիսել: Ստացված ութ մասերից մեկը պատկերված է Նկ. 4-ում: Նրա զուգահեռ հատույթները զուգահեռ OPQ եռանկյան հարթությանը հանդիսանում են հավասարաչափ ուղղանկյուն եռանկյուններ: Եթե x-ը հատող հարթության հեռավորությունն է գլանի տրամագծի ձայրակետից, ապա S(x) հատույթի մակերեսը հավասար է OPQ եռանկյան մակերեսին՝

1/2 AC^2 - 1/2 x(2r - x);

Հավասարության աջ մասը քառակուսային ֆունկցիա է, Նյուտոն-Սիմպսոնի բանաձևի համաձայն



Նկ. 5

h - 2r, 0 <= x <= 2r, S = 1/2 * r^2;

որոնելի ծավալը հավասար է՝

V = 8 * (2r/6 * (0 + 0 + 4 * 1/2 * r^2)) = 16/3 * r^3:

Խնդիր 12. (դ) - ի լուծման III եղանակ: Լ ու ծ ու մ:

Գլանների առանցքերը ընտրենք որպես կոորդինատային համակարգի Oy և Oz առանցքեր (Նկ. 5): OABCD մարմինը կազմում է մեզ հետաքրքրող մարմնի՝

«բարձի» մեկ ութերորդ մասը: Հատենք այդ մարմինը Ox առանցքին ուղղահայաց հարթությամբ, O կետից x հեռավորության վրա: Հատույթում կստանանք EFKL քառակուսի EF = sqrt(r^2 - x^2) երկարությամբ կողմով: Այդ պատճառով

S(x) = r^2 - x^2: Հաշվենք մարմնի ծավալը (1) բանաձևով.

V = 8 integral_0^r (r^2 - x^2) dx = 8 (r^2 x - x^3/3) | 0^r = 8 (r^3 - r^3/3) = 16/3 * r^3:

Ո. ԱՆԱԲԵՆՅԱՆ

Արդ՝ Հ մաթեմատիկայի և ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոն, դոցենտ

Շնորհավորանք ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԿՅԱՆԸ



Վերջերս լրացավ պատվարժան ուսուցչուհի, աշակերտների կողմից սիրված դաստիարակ Ջարուհի Ավրեսյանի ծննդյան 60 տարին:

Մանկավարժությունը նրա տարերքն է: Յուրաքանչյուր պարապմունք նրա համար նվիրական արարողություն է, յուրահատուկ արվեստ, հոգեմա գործողության կատարում, որից այնքան բավականություն են ստանում և՛ ինքը, և՛ իր սաները:

Նա խորազգա անհատականություն է՝ օժտված բարձր գիտակցական կարգապահությամբ, պարտքի ու պատասխանատվության զգացումով, անձնային վսեմ որակներով: Արդարամիտ է, արդարադատ, սկզբունքային, հավատարիմ մանկավարժի վեհ կոչմանը:

Աշխատանքային բարձր կազմակերպվածությամբ, ողջախոհ ու բանիմաց մանկավարժը մշտապես ստեղծագործաբար ուրույն իր ասելիքով ու անկավարժի գեղեցիկ մի կենսագրություն, որի էջերից իր սաներին, մարդկանց ու հասարակությանը նայում է որպես լուսավորյալ ջահի կրող:

Ծնվել է 1953թ. ապրիլի 10-ին, Շուշիի շրջանի Քարին տակ գյուղում, ծառայողի ընտանիքում:

1970թ. ավարտել է նույն գյուղի միջնակարգ դպրոցը, 1972-1974թթ. սովորել և ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանի նախադպրոցական բաժինը: 1979-1994 թթ. աշխատել է Ստեփանակերտի կոչիկի ֆաբրիկային կից մուտք-մանկապարտեզում, նախ՝ որպես դաստիարակչուհի, այնուհետև՝ որպես վարիչ: 1990-95թթ. սովորել և ավարտել է Արցախի պետական լիսնապարսի մանկավարժություն և հոգեբանություն (նախադպրոցական) բաժինը և ստացել նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ուսուցչի, դաստիարակի որակավորում:

1994-ից առայսօր աշխատում է Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցում՝ որպես նախադպրոցական խմբի դաստիարակ:

60 պտույտ կատարելով՝ գլորվել են նրա կյանքի երիտասարդ տարիները: Բարդ է կյանքը, ուրախություններով ու դժվարություններով լի: Բայց նա միշտ հպարտ է քայլել անգամ տատակոտ ճանապարհներով ու երբեք չի երկնջել դժվարություններից: Նա միշտ պատրաստ է օգնել, հուսադրել, կարեկցել ու աջակցել:

Սիրում է մեծին ու փոքրին, արդյունքում շահում բոլորի սերն ու հարգանքը:

Հարգարժան տիկին Ավրեսյան, շնորհավոր Ձեր ծնունդը: Ձեզ ցանկանում ենք այնքան երկար կյանք, հաջողություններ, համբերություն, որ կարողանաք կրթել ու դաստիարակել դեռ շատ սերունդների:

Ստեփանակերտի հ.6 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ԴԵՏՅԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2013-2014 ՈՒՍԱՐՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԿԱ ԵՎ ՇԵՌԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարանը 2013-2014 ուսումնական տարվա համար կատարում է սովորողների ընդունելություն:

- 1. Հայոց լեզու և գրականություն
2. Իրավագիտություն
3. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա
4. Տնտեսագիտության տեսություն (ֆինանսներ, կառավարում, հաշվապահական հաշվառում)
5. Ռուսաց լեզու և գրականություն
6. Անգլերեն լեզու և գրականություն (առկա)
7. Նախագորակոչային պատրաստություն և ֆիզկուլտուրա

- 8. Պատմություն
9. Լրագրություն:

Ուսման տևողությունը. առկա ուսուցմամբ՝ 4 տարի, հեռակա ուսուցմամբ՝ 5 տարի:

ՍԱԳԻՍՏՐԱՍՈՒՐԱ: «Գրիգոր Նարեկացի» համալսարանի, ինչպես նաև բուհերի բակավայրի, դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու և մագիստրոսի որակավորում ստանալու նպատակով կարող են իրենց կրթությունը շարունակել համալսարանի մագիստրատուրայում:

Ուսման տևողությունն է. առկա ուսուցմամբ՝ 2 տարի, հեռակա ուսուցմամբ՝ 3 տարի: Ուսուցումը կազմակերպվում է հետևյալ մասնագիտությունների գծով.

- 1. Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա
2. Հայոց լեզու
3. Հայ գրականություն
4. Լրագրություն
5. Պատմություն
6. Իրավագիտություն
7. Տնտեսագիտության տեսություն (ֆինանսներ, կառավարում, հաշվապահական հաշվառում):

ՔՈՒԵՑ (միջին մասնագիտական կրթական ծրագիր): Համալսարանին կից գործող քոլեջում ընդունելությունը կատարվում է առանց քննությունների, մրցութային կարգով: Այստեղ կարող են սովորել հիմնական դպրոցի շրջանավարտները: Քոլեջը կադրեր է պատրաստում հետևյալ մասնագիտությունների գծով.

Ռազմամարզական

ՈՒՉՄԱԿԱՆԱՅՎԱԾ ԿՐՈՍԱՎԱՋՔԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՄ

Ապրիլի 29-30-ը Ստեփանակերտի հ.2 հիմնական դպրոցին կից մարզադաշտում կայացան ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-9-րդ դասարանների պատանիների միջև ռազմականացված կրոսավազքի» հանրապետական մրցումներ՝ նվիրված Արցախյան շարժման 25-ամյակին:

Մրցումներին մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ բոլոր շրջանների հավաքական թիմերը:

Մրցումների ծրագրով 1700 մետր տարածության վրա պատանիները պետք է հաղթահարեին հինգ փուլ.

- ձգումներ պտտածողի վրա (մաքուր ձգում)
- ԿԱ-ի քանդում, հավաքում, պահեստատուփի լիցքավորում ու լիցքաթափում:
- Հրաձգություն օդանալից հրացանից 10 մետր հեռավորության վրա տեղադրված փուչիկների վրա (3 կրակոց):
- 500 գրամանոց նռնակի նետում նշանակետին:
- Լաբիրինթոսի հաղթահարում:
- 20 կգ-անոց փամփուռների արկղի տեղափոխում:
Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էին 5 տղաներ, որոնք պետք է մասնակցեին բոլոր փուլերին:

Մրցումների հանդիսավոր բացման ժամանակ ԼՂՀ Կրթության և գիտության նախարարության ՌՀ, ՖԴ և ՀԳԿ բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը, ողջունելով մասնակիցներին, կարևորեց նման մրցումների կազմակերպումը որպես ռազմամարզական կարևոր միջոցառում՝ Ֆիզիկապես ուժեղ հայրենիքի պաշտպանների նախապատրաստելու գործում: Քանի որ մասնակցելով նման մրցումների, նրանց մոտ կզարգանա ռազմամարզական կոփածությունը:

Մասնակիցներին ողջունեց ու հաջողություններ մաղթեց նաև ԼՂՀ պաշտպանության նախարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և ՀԳԿ բաժնի պետ, գնդապետ Բ. Մուրադյանը:

Ծավալված համառ և անգիջուն մրցակցության արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց հաղթողներին:

Թիմային հաշվարկով առաջին տեղը գրավեց Ստեփանակերտ քաղաքի թիմը, երկրորդ տեղը՝ Մարտունու շրջանի, երրորդ տեղը՝ Մարտակերտի շրջանի հավաքական թիմերը:

Անհատական հաշվարկով առաջին տեղը զբաղեցրեց Միեր Ավագիմյանը՝ Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցից, երկրորդ տեղը Անդրանիկ Իսանյանը՝ դարձյալ ֆիզմաթ դպրոցից,

երրորդ տեղը՝ Արտակ Պետրոսյանը՝ Ստեփանակերտի հ.9 հիմնական դպրոցից:

Թիմային և անհատական հաշվարկներով հաղթողները ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների, պատվոգրերի, թանկարժեք նվերների և դրամական պարգևների:

Դրամական խրախուսանքի արժանացան մրցանակային տեղեր գրաված Ստեփանակերտ քաղաքի, Մարտունու և Մարտակերտի շրջանների հավաքականների մարզիչներ Վ. Աղաջանյանը, Չ. Բադալյանը Գ. Սարգսյանը:

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ու հետագա հաջողություններ մաղթեց ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ՌՀ, ՖԴ և ՀԳԿ բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը:

Թիմային և անհատական հաշվարկներով հաղթողները պատվոգրեր և արժեքավոր նվերներ ստացան ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից: Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց նախարարության ռազմահայրենասիրական դաստիարակության և ՀԳԿ բաժնի պետ, գնդապետ Բ. Մուրադյանը:

Մուրադ ՀԱՅՐԱՍՄԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԴԻՊԼՈՄ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Արցախյան դպրոցականները նոր հաջողություններ են գրանցել «Պատմություն» առարկայից Հայաստանի Հանրապետությունում անցկացված դպրոցականների առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլում: Մասնակցած բոլոր երեք արցախցիներն էլ արժանացել են դիպլոմների. Մարտունու շրջանի ճարտարի հ. 1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Ժենյա Հարությունյանը գրավել է 1-ին տեղ, Այգեստանի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Վահե Բարսեղյանը և Խաչմաչի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Էլլարա Հարությունյանը գրավել են 3-րդ մրցանակային տեղերը:

Շնորհավորում ենք հաղթողներին և նրանց ուսուցիչներին:

Սեփ. Լրավարություն

ԼՈՒՍԱՐԱՐ հանրագիր՝ ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱՉՍՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Գրքերի և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3171: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.04.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: